Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
արտակարգ իրավիճակների նախարարի
2017թ. հոկտեմբերի 4-ի թիվ 1106 հրամանի

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

ԿԼԻՄԱՅԻ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ՀԱՐՍՏԱՑՎԱԾ

ԿԻՐԱՌԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ – 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԽԵՄԱՏԻԿ ՊԱՏԿԵՐ 3

1.ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ 4

2. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ 6

2.1. Վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտում 8

2.1.1. Վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման գործընթաց 9

Ա. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ 9

Բ. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ 11

Գ. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 11

2.1.2. Վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման գործիքների հավաքածու 12

1. Երկրորդային աղբյուրների տվյալներ 12

2. Ուղղակի դիտարկում 16

3. Սխեմատիկ պատկերում 21

4. Հարմարեցված (ճկուն) հարցազրույց 24

5. Քննարկումներ թիրախային (ֆոկուս) խմբերում 26

6. Սեզոնային օրացույց 28

7. Պատմական օրացույց 32

8. Հաստատութենական աղյուսակ 34

9. Զանգվածային հարցում բնակչության շրջանում հարցաթերթիկների միջոցով 36

2.1.3. Հավաքագրված տվյալների, տեղեկատվության վերլուծություն 38

2.1.4. Վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման վերլուծական աղյուսակներ 40

2.1.5. Կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելիության և կլիմայական ռիսկի բացահայտման վերլուծական աղյուսակներ 47

2.2. Նկատառումներ ՏՄՌԿ մեթոդաբանության կիրառելիության վերաբերյալ 53

ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԽԵՄԱՏԻԿ ՊԱՏԿԵՐ



1.ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Սույն գործնական ուղեցույցն իրենից ներկայացնում է համայնքների կողմից տեղական մակարդակում աղետների և կլիմայական ռիսկերի կառավարման գործիքների և գործառույթների ամբողջական փաստաթուղթ: Այն փորձարկվել և տեղայնացվել է Հայաստանում՝ հիմք ընդունելով միջազգայնորեն ընդունված նմանատիպ գործիքների կիրառման փորձը:

Տեղական մակարդակում ռիսկի կառավարման նպատակն է նպաստել Հայաստանում աղետներին և կլիմայի փոփոխությամբ պայմանավորված մարտահրավերներին դիմակայուն համայնքների կայացմանն ու զարգացմանը: Ուղեցույցի կիրառման արդիականությունը պայմանավորված է տեղական մակարդակում աղետների և կլիմայական ռիսկերի կառավարմանը նպատակաուղղված աշխատանքներ իրականացնելու, համայնքին սպառնացող վտանգավոր երևույթներից բխող ռիսկերի բացահայտման ու գնահատման, համայնքային զարգացման ծրագրերում աղետների ռիսկի կառավարման բաղադրիչների ներառումն ապահովելու, աղետների և կլիմայական ռիսկերի կառավարման գործառույթների ապակենտրոնացմանը նպաստելու, աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության մշակույթի ձևավորման, վերջնարդյունքում՝ դիմակայուն երկրի կառուցման անհրաժեշտությամբ:

Ուղեցույցը մշակվել է ի նպաստ Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարությամբ[1], Սենդայի երրորդ համաշխարհային համաժողովում ընդունված աղետների ռիսկի նվազեցման 2015-2030 թվականների գործողությունների ծրագրով[2] և այս ոլորտին վերաբերող ՀՀ կառավարության և վարչապետի համապատասխան որոշումներում ամրագրված ՀՀ հանձնառություններով (մասնավորապես՝ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների (2015-2030)[3], Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի (1992)[4], «Փարիզյան համաձայնագրի ներքո ՀՀ 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունների»[5] և «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիր և 2021-2025 թվականների միջոցառումների»[6] վերաբերյալ) նախատեսված գործողությունների իրագործմանը: Ուղեցույցը հանդիսանում է աղետների և կլիմայական ռիսկերի կառավարման ազգային մշակույթի ձևավորման ու ներդրման ուղղությամբ ձեռնարկվող կարևորագույն քայլերից մեկը:

Ուղեցույցի մշակման համար հիմք են հանդիսացել ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից համատեղ իրականացված «Աղետներին նախապատրաստվածության և ռիսկերի

[1] http://www.irtek.am/views/act.aspx?aid=89604
[2] http://www.mes.am/files/docs/2201.pdf/
[3] https://www.arlis.am/documentview.aspx?docid=141605
[4] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=154215
[5] https://www.arlis.am/documentview.aspx?docid=151985
[6] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152612

նվազեցման ազգային կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում կազմված «Տեղական մակարդակում ռիսկի կառավարում» կիրառական ձեռնարկը (2012)[7] և «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամի, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, համայնքների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և հասարակական կազմակերպությունների անմիջական մասնակցությամբ և աջակցությամբ ՀՀ մոտ 300 համայնքներում տեղական մակարդակում ռիսկի կառավարման մեթոդաբանության կիրառման փորձը:

Աղետների հետևանքների երկարամյա հետազոտությունների և վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ վտանգավոր երևույթների աղետալի հետևանքները ավելի են խորացնում կանանց և տղամարդկանց, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց և այլ խոցելի խմբերի անհավասարությունը՝ ավելի վատթարացնելով նրանց ապրելու և կենսագործունեության պայմանները: Աղետների ռիսկի կառավարման գերակա խնդիրներից է հասարակության բոլոր ներկայացուցիչների անվտանգության և մարդու իրավունքների պաշտպանության ապահովումը: Այս առումով, ուղեցույցը հնարավորինս անդրադառնում է նշված խնդրին, ռիսկերի բացահայտման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման և վերլուծության իր ողջ գործիքակազմում հաշվի առնելով բնակչության խոցելի խմբերի առանձնահատկություններն ու կարիքները, ներգրավված կողմերի դերերը և պատասխանատվության աստիճանը:

Վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման (այսուհետ՝ ՎԽԿԲ) ամփոփ հաշվետվությունը՝ համաձայն ձևաչափի ***(հավելված 8)***, ներկայացվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության եզրակացությանը, որից հետո հաստատվում է համայնքի ավագանու կողմից: Տեղական մակարդակում ռիսկի կառավարման ամփոփ հաշվետվությունն անհրաժեշտ է պարբերաբար թարմացնել (երկու-երեք տարին մեկ, իսկ համայնքի անձնագիրն՝ ըստ անհրաժեշտության):

[7] http://tert.nla.am/archive/HAY%20GIRQ/Ardy/2012-2015/riskikaravarum_2012.pdf

2. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Աղետների ռիսկի կառավարման գործընթացը բաղկացած է մի շարք բաղադրիչներից, որոնց հաջորդական կիրառումը հնարավորություն է տալիս նպաստել համայնքային մակարդակում աղետների և կլիմայական ռիսկերի բացահայտմանը, գնահատման ու աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի մշակմանն ու իրականացմանը: Դրանք են.

- բնական և տեխնածին վտանգների, խոցելիության, կարողությունների բացահայտում և գնահատում,
- արտակարգ իրավիճակներին դիմակայելու ուղղությամբ բնակչության ուսուցում և իրազեկում,
- բնակչության գիտելիքների մակարդակի բարձրացման նպատակով համապատասխան ուսումնական նյութերի մշակում, տպագրում և տարածում,
- աղետների կանխարգելիչ ծրագրերի և կլիմայի հարմարվողականության միջոցառումների պլանավորում և իրականացում,
- համայնքային զարգացման ծրագրերում աղետների ռիսկի նվազեցման կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների ներառում,
- աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների իրականացում, մոնիթորինգ և գնահատում:

Պետական կառավարման համապատասխան կառույցների և տեղական ինքնակառավարման մարմինների համար նախատեսված սույն ձեռնարկը պատասխանատու բոլոր դերակատարներին տրամադրում է տեղական մակարդակում աղետների և կլիմայական ռիսկերի կառավարման ընդհանուր հենք, միասնական մոտեցում և գործառույթն իրականացնելու համար անհրաժեշտ գործելակերպի ու գործիքների ամբողջություն, ինչը թույլ կտա.

1. ստեղծել կառավարման, համակարգման և համագործակցային մեխանիզմներ՝ ռիսկերի բացահայտման և կառավարման նպատակով: Ապահովել, որ տեղական բոլոր հաստատություններն ու կառույցներն ընկալեն իրենց դերն ու պատասխանատվությունը աղետների պատրաստվածության, աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործում,
2. ապահովել սեփականատերերի, գործարար և հանրային հատվածի ներկայացուցիչների մասնակցությունը՝ խրախուսելով նրանց հնարավորինս ներդրումներ կատարել /այդ թվում ֆինանսական/ համայնքին սպառնացող ռիսկերին դիմակայելու գործողություններին նպաստելու համար,
3. ապահովել ճշգրիտ տվյալների հավաքագրում վտանգավոր երևույթների և այդ երևույթների նկատմամբ համայնքի խոցելիության վերաբերյալ, գնահատել ռիսկերն ու մշակել դրանց կանխարգելման/նվազեցման համար անհրաժեշտ

միջոցառումները, օգտագործելով դրանք որպես համայնքի զարգացման պլանավորման և որոշումների կայացման հիմք,

4. կատարել ներդրումներ, ապահովելով ռիսկի նվազեցման տեսանկյունից կարևոր ենթակառուցվածքների (ինչպիսիք են, օրինակ, հեղեղատարները, ջրատարները, կոյուղիները և այլն) անխափան շահագործումը, այդ թվում, նվազեցնելով վերջիններիս խոցելիությունը կլիմայի փոփոխության նկատմամբ,
5. գնահատել դպրոցների և առողջապահական հաստատությունների անվտանգությունը և, ըստ անհրաժեշտության, բարձրացնել ու բարելավել դրանց դիմակայունության մակարդակը,
6. պարտադիր և հետևողականորեն կիրառել առկա ռիսկերին համապատասխան շինարարական նորմերն ու հողօգտագործման պլանավորման սկզբունքները: Բարձրացնել ու բարելավել գործող շինարարական նորմերին չհամապատասխանող շինությունների անվտանգության մակարդակը,
7. ապահովել աղետների ռիսկի նվազեցմանն ու կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ուղղված հանրակրթական ծրագրերի և հանրության իրազեկվածության բարձրացման համար նախատեսված դասընթացների ներդրումն ու իրականացումը համայնքում,
8. պաշտպանել էկոհամակարգերն ու բնական պաշտպանական միջավայրը, որոնց օգնությամբ հնարավոր է մեղմել կամ նվազեցնել համայնքին սպառնացող ջրհեղեղների, փոթորիկների, կարկտահարության և այլ վտանգավոր երևույթների ազդեցությունը,
9. հիմնել վաղ ազդարարման համակարգեր և ստեղծել ճգնաժամային կառավարման համապատասխան կարողություններ: Համայնքի բնակչության պատրաստվածության մակարդակի բարձրացման նպատակով կանոնավոր կերպով կազմակերպել և իրականացնել տարահանման և առաջին օգնության ցուցաբերման հանրային ուսումնավարժանքներ,
10. երաշխավորել աղետներին արձագանքելիս և հետաղետային վերականգնման փուլում տուժած բնակչության կարիքների ապահովման առաջնահերթությունը: Աջակցել բնակչությանն ու համայնքային կազմակերպություններին աղետների արձագանքմանն ու հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների մշակման և իրականացման գործում, ներառյալ շենքերի և շինությունների վերակառուցումն ու կենսական կարևոր պայմանների վերականգնումը:

2.1. Վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտում

ՎԽԿԲ գործընթացը տեղական մակարդակում ռիսկի կառավարման բաղկացուցիչ մասն է և ***իրականացվում է համայնքի անմիջական մասնակցությամբ***՝ ներգրավելով ավագանու անդամներին, բնակչության մասնագիտական հանրության և սոցիալական տարբեր շերտերի ներկայացուցիչներին (մանկավարժներ, բուժաշխատողներ, ֆերմերներ, դպրոցականներ, ուսանողներ, խոցելի խմբերի ներկայացուցիչներ, համայնքի շարքային բնակիչներ և այլն), աղետների ռիսկի կառավարման մարզային թիմի անդամներին՝ ներառյալ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության մարզային վարչության ներկայացուցիչներն ու մարզպետարանի համապատասխան մասնագետները:

Հաշվի առնելով համայնքների խոշորացման հանգամանքը, ՎԽԿԲ գործընթացն իրականացնող թիմը պետք է գործընթացն իրականացնի բոլոր բնակավայրերում՝ ներգավելով տեղի բնակիչներին:

ՎԽԿԲ գործընթացի իրականացման արդյունքում հնարավոր կլինի.

- ***Բացահայտել*** համայնքին (ներառյալ բնակավայրերը) սպառնացող վտանգները և կլիմայի փոփոխությամբ պայմանավորված այդ վտանգների սաստկացման աստիճանը, այդ վտանգների նկատմամբ համայնքի խոցելիությունն ու առկա կարողությունները և վերջիններիս համադրությունից բխող աղետների ռիսկը: Կլիմայի փոփոխության տեսանկյունից, գործընթացը հնարավորություն է տալիս նաև գնահատելու համայնքում վտանգի ենթակա համակարգերի/տարրերի խոցելիությունը կլիմայի փոփոխության՝ եղանակային ծայրահեղությունների և տատանումների նկատմամբ, ինչպես նաև հարմարվողականության կարողությունները:
- ***Ձևավորել*** աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համայնքի համար առաջնային, կենսական նշանակության միջոցառումների սկզբունքներն ու մեխանիզմները և մշակել համապատասխան պլաններ:
- ***Նպաստել*** համայնքի բնակչության իմացության, հմտությունների, գիտելիքների մակարդակի բարձրացմանը, նշված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների բացահայտմանը, քարտեզագրմանը և կայուն ֆինանսական մեխանիզմների ստեղծմանը:

ՎԽԿԲ տվյալների հավաքագրման համար ընտրվել է 9-ը գործիք.

- երկրորդային աղբյուրների տվյալների հավաքագրում,
- ուղղակի դիտարկում,
- սխեմատիկ պատկերում,
- հարմարեցված /ճկուն/ հարցազրույցներ,

- քննարկումներ թիրախային խմբերում,
- սեզոնային օրացույց,
- պատմական օրացույց,
- հաստատութենական շրջանակ,
- զանգվածային հարցում բնակիչների շրջանում հարցաթերթիկների միջոցով:

2.1.1. Վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման գործընթաց

ՎԽԿԲ-ն տեղական մակարդակում՝ համայնքում/բնակավայրում իրականացվող հետազոտական, վերլուծական գործընթաց է, որը բաղկացած է հետևյալ 3 փուլերից.

- նախապատրաստական,
- տվյալների հավաքագրման,
- վերլուծական:

Ա. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ

Նպատակն է ապահովել բացահայտման ողջ գործընթացի իրականացումը կազմակերպչական և ընթացակարգային բոլոր առումներով:

Ձեռնարկվող քայլերն են.

- ✓ համայնքի ավագանու կամ համայնքապետի որոշումով ձևավորել ՎԽԿԲ համայնքային թիմ (ՎԽԿԲ գործիքակազմի կիրառմամբ անհրաժեշտ տվյալների հավաքագրման նպատակով) և նշանակել ՎԽԿԲ գործընթացի իրականացման համակարգող (համայնքի ղեկավար, համայնքի ղեկավարի օգնական, աշխատակազմի քարտուղար, ավագանու անդամ, բնակավայրի վարչական ղեկավար),
- ✓ հաստատել թիմի գործողությունների պլանը՝ քայլերի հաջորդականությունը և ժամանակացույցը,
- ✓ նախատեսել ՎԽԿԲ գործընթացին մասնակից թիրախային խմբերում ներգրավվողների և անհատ հարցվողների քանակը և ներկայացուցչական կազմը, հնարավորինս ապահովելով խոցելի խմբերի՝ տարեցների, կանանց, երեխաների, երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, ազգային փոքրամասնությունների, մասնակցությունը:

Ակնկալվող արդյունքներն են.

- ✓ ՎԽԿԲ ձևավորված աշխատանքային թիմ,
- ✓ ՎԽԿԲ գործընթացի հաստատված պլան,
- ✓ հարցվողների և թիրախային խմբերի ձևավորված քանակական և որակական ցանկ,
- ✓ ՎԽԿԲ գործընթացի իրականացման պատասխանատու համակարգող:

Համայնքում վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման թիմի ստեղծման մասին համայնքի ղեկավարի որոշման օրինակելի ձև

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ..... ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

«...» /ամիս, ամսաթիվ, տարի/, N .....

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎՏԱՆԳՆԵՐԻ, ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԹԻՄԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «……» Հայաստանի Հանրապետության օրենքի …… հոդվածի …… պահանջներով …… *որոշում եմ՝*

1. Ձևավորել ……. համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման (այսուհետ՝ ՎԽԿԲ) թիմ հետևյալ կազմով.

- …… …… – /պաշտոն/ ՎԽԿԲ թիմի համակարգող,
- …… …… – /պաշտոն/ ՎԽԿԲ թիմի համայնքի բնակչության հետ հարցումների իրականացման պատասխանատու,
- …… …… – /պաշտոն/ ՎԽԿԲ թիմի սխեմատիկ պատկերման և հարցումների պատասխանատուներ (ԱՌՆ մարզային թիմի ներկայացուցիչ /համաձայնությամբ/) ,
- …… …… – /պաշտոն/ ՎԽԿԲ թիմի թիրախային (ֆոկուս) խմբերի հետ հարցում իրականացնելու պատասխանատու,
- ՎԽԿԲ թիմի համակարգողը պատասխանատվություն է կրում համայնքում ՎԽԿԲ գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու և իրականացնելու գործում:

2. Հաստատել ……. համայնքի ՎԽԿԲ թիմի գործողությունների ժամանակացույցը:
3. ՎԽԿԲ գործընթացի ավարտից հետո ՎԽԿԲ թիմի կողմից կազմված հաշվետվությունը, համապատասխան եզրակացությունից հետո, ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:

Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ……

Բ. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ

Նպատակն է բացահայտել համայնքին սպառնացող վտանգներն ու վերջիններս դասակարգել ըստ գերակայության:

Ձեռնարկվող քայլերն են.

1. Իրականացնել համայնքի դիտարկում և վտանգների, խոցելիության և կարողությունների (այդ թվում վտանգի ենթակա տարրերի կլիմայի փոփոխության նկատմամբ խոցղելիության և հարմարվողականության կարողությունների) սխեմատիկ պատկերում՝ համայնքի ՎԽԿԲ թիմի անդամների մասնակցությամբ:
2. Հրավիրել ՎԽԿԲ թիմի և համայնքի (ներառյալ բնակավայրերը) ներկայացուցիչներին առաջին հանդիպմանը, նպատակ ունենալով՝

- ✓ ներկայացնել համայնքում իրականացվող ՎԽԿԲ գործընթացը,
- ✓ քննարկել և լրամշակել դիտարկման և սխեմատիկ պատկերման արդյունքները,
- ✓ քննարկել և լրացնել սեզոնային ու պատմական օրացույցները,
- ✓ քննարկել պետական և ոչ պետական շահագրգիռ կառույցների ուղղակի կամ անուղղակի մասնակցությունը համայնքի սոցիալ-տնտեսական կյանքում և ձևավորել նրանց ցանկն (հաստատութենական աղյուսակ)՝ ըստ համայնքի զարգացման գործում նրանց կարևորության և ազդեցության աստիճանի:

3. Կազմակերպել ՎԽԿԲ թիմի և թիրախային խմբերի երկրորդ հանդիպում՝ նպատակ ունենալով համատեղ քննարկել հավաքագրված տվյալները:
4. Բնակչության շրջանում ձեռնարկել զանգվածային հարցում հարցաթերթիկների միջոցով:

Ակնկալվող արդյունքներն են.

- ✓ համայնքի բնակիչներն ընդունում են ՎԽԿԲ ձեռնարկելու անհրաժեշտությունը, որն ուղղված է համայնքին սպառնացող վտանգների բացահայտմանն ու ռիսկերի հանդեպ համայնքի իրազեկվածության բարձրացմանը,
- ✓ համայնքը մասնակցում է ՎԽԿԲ գործընթացին և՛ որպես իրականացնող թիմ (ավագանու անդամներ, ուսուցիչներ և այլն), և՛ որպես բնակիչներ (թիրախային խմբեր, հարցվողներ),
- ✓ համայնքի առաջարկությունները կապված համայնքին սպառնացող վտանգների և նրանց առաջնայնության հետ քննարկվում են թիմի անդամների հետ, հաշվի են առնվում հետագա վերլուծության համար և ներառվում են աղետների ռիսկի կառավարման համայնքի անձնագրում ***(հավելված 3)***:

Գ. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նպատակն է համայնքի համար մշակել աղետների ռիսկի նվազեցմանը և կլիմայի փոփոխության հարմարվողականությանը նպատակաուղղված և փոխհամաձայնեցված գործողություններ, որոնք համահունչ կլինեն համայնքի կարիքներին, պահանջներին և կնպաստեն զարգացման ծրագրերի իրականացմանը:

Ձեռնարկվող քայլերն են.

ՎԽԿԲ իրականացնող թիմը մշակում, վերլուծում և ամփոփում է հավաքագրված տվյալները և, ըստ բացահայտված վտանգների առաջնահերթության, առաջարկում է աղետների ռիսկի նվազեցմանն ու կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ուղղորդված անհրաժեշտ գործողությունների պլան:

Ակնկալվող արդյունքներն են.

- ✓ իրական և առաջնային ռիսկերի բացահայտում,
- ✓ ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումներում համայնքի կողմից ֆինանսական և այլ ռեսուրսների ներդրում, ֆինանսավորման պետական և ոչ պետական աղբյուրների ներգրավման համար նախադրյալների ստեղծում և մեխանիզմների մշակում,
- ✓ աղետների ռիսկի նվազեցմանը նպաստող նախագծերի իրականացմանը հնարավոր աջակցող շահագրգիռ կազմակերպությունների կամ հիմնական դերակատարների ու մասնավոր ներդրողների ցանկի կազմում,
- ✓ աղետների ռիսկի նվազեցմանը և կլիմայի փոփոխության հարմարվողականությանը նպաստող միջոցառումների ներառում համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում («Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ 2016թ. դեկտեմբերի 16-ի ՀՕ-237-Ն օրենքի 12-րդ հոդվածի կետ 12, որով սահմանվում է, որ համայնքի ***պարտադիր խնդիրներից է*** աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը):

2.1.2. Վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման գործիքների հավաքածու

1. Երկրորդային աղբյուրների տվյալներ

Նպատակ

Երկրորդային աղբյուրներից հավաքված տվյալներն անհրաժեշտ են ՎԽԿԲ գործընթացն իրականացնող թիմի համար, քանի որ տրամադրում են նախնական տեղեկատվություն համայնքի մասին: Համայնքի մասին երկրորդային աղբյուրներից տվյալները հավաքագրվում և համակարգվում են նախօրոք՝ խոցելիության և կարողությունների գնահատման ՎԽԿԲ նախապատրաստական փուլի ընթացքում: Մասնավորապես, դրանք կարող են լինել ՀՀ կառավարության որոշումներ, պետական

կառույցների (ՀՀ արտակարգ իրավիճակների, շրջակա միջավայրի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և այլ նախարարությունների, ազգային վիճակագրական ծառայության և այլ պետական մարմինների) կողմից հրապարակված պաշտոնական հաշվետվություններ, զեկույցներ, սխեմատիկ պատկերներ (աշխարհագրական և սոցիալտնտեսական քարտեզներ) և այլ տվյալներ, տեղական ինքնակառավարման մարմինների հաշվետվություններ, ինչպես նաև համայնքում իրականացված ծրագրերի վերաբերյալ այլ ոչ պետական կազմակերպությունների, (սոցիալական ինստիտուտների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների և այլն) հաշվետվություններ, հետազոտություններ, զեկույցներ, ՋԼՄ-ների կողմից հրապարակված նյութեր և այլն:

Կարևոր է նախնական տեղեկատվություն ունենալ համայնքի զարգացման պլանների և ծրագրերի վերաբերյալ, ինչը կնպաստի աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողությունների հետագա պլանավորմանը: Կարևորվում է նաև համայնքի խոցելի խմբերի (կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց և այլն), հատկապես երեխաների վերաբերյալ տվյալների հավաքագրումը՝ մասնավորապես հաշմանդամություն ունեցող երեխաների, ովքեր ապրում են խոցելի ընտանիքներում, կամ գտնվում են պետական կամ այլ խնամակալության ներքո:

Ակնկալվող արդյունքներ

ՎԽԿԲ գործընթացի փուլում համայնքին սպառնացող վտանգների՝ ներառյալ, կլիմայի փոփոխության ազդեցությամբ պայմանավորված, ինչպես նաև խոցելիության, ռիսկերի, ռեսուրսների վերաբերյալ երկրորդային աղբյուրներից քաղված տվյալները կարևորվում են այլ գործիքների կիրառմամբ հավաքագրված տվյալների հետ հետագա համադրման և վերլուծության համար:

Համայնքի վերաբերյալ երկրորդային աղբյուրներից ստացված տվյալները տեղեկատվություն են տրամադրում համայնքի տեղադիրքի, բնակլիմայական պայմանների, բնակչության/ժողովրդագրության, համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի, զբաղվածության, ենթակառուցվածքների, տրանսպորտային միջոցների, ջրային և հողային ռեսուրսների կառավարման, շենք-շինությունների եվ այլնի մասին, ինչպես նաև տարբեր կառույցների կողմից իրականացված ծրագրերի, համայնքում տեղի ունեցաց իրադարձությունների (արտակարգ իրավիճակների, խոշոր կորուստներով երևույթների և այլ), շրջակա միջավայրի վերաբերյալ: Հույժ կարեվոր է նաեվ, համայնքային/մարզային մակարդակում կլիմայի փոփոխության միտումների (ջերմաստիճան, տեղումներ, եղանակային ծայրահեղ դրսեվորումներ), հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների հաճախականության և ուժգնության վերաբերյալ տեղեկատվության հավաքգրումը, հատկապես՝ կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելի ոլորտների (բնական էկոհամակարգերի՝ ջրային և ցամաքային, ներառյալ անտառային էկոհամակարգերը, կենսաբազմազանության և հողածածկույթի, մարդու առողջության, ջրային ռեսուրսների կառավարման, գյուղատնտեսության՝ ներառյալ ձկնաբուծությունը, և անտառային

տնտեսության, էներգետիկայի, բնակավայրերի և ենթակառուցվածքների, զբոսաշրջության)[8] տեսանկյունից:

Կարևոր է հաշվի առնել, որ կլիմայի փոփոխության և կլիմայական ռիսկերին վերաբերող աղբյուրների տվյալները հիմնականում կրում են ազգային կամ, լավագույն դեպքում, մարզային բնույթ՝ տեղական մակարդակում կլիմայի թվային մոդելավորման համար անհրաժեշտ տեխնիկական հնարավորությունների բացակայության պատճառով[9]: Միևնույն ժամանակ, կլիմայական համանման վտանգավոր երևույթների հետևանքները երկու հարևան բնակավայրերում կարող են տարբերվել, ինչի պատճառը երկրի լեռնային բնույթն է և ռելիեֆի խիստ կտրտվածությունն ու լանջերի զառիթափությունը: Այս առումով, հավաքագրված տեղեկատվությունը հնարավոր է, որ շատ ընդհանրական բնույթ կրի և տեղական մակարդակում այնքան էլ ճշգրիտ չարտացոլի եղանակային տատանումներից կամ ծայրահեղություններից բխող իրական ազդեցությունը: Հնարավորինս ճշգրիտ պատկեր ստանալու նպատակով, առաջարկվում է երկրորդային աղբյուրներից ստացված տեղեկատվությունը քննարկել և վերահաստատել/ճշտել համայնքներում հանդիպումների ժամանակ՝ վավերացնելով այն վերլուծության փուլում օգտագործելու համար:

Տվյալները կարող են հավաքագրվել, օրինակ, ստորև բերված աղբյուրներից /ցանկը կարող ընդլայնվել յուրաքանչյուր կոնկրետ համայնքի/բնակավայրի համար/.

- Կլիմայի փոփոխության հետևանքով խոցելիության գնահատում. Հայաստան, https://climateforumeast.org/uploads/other/0/570.pdf
- Կլիմայական ռիսկերի կառավարումը Հայաստանում, Երկրի հաշվետվություն. Հայաստան, ՄԱԶԾ, http://www.nature-ic.am/Content/announcements/7296/TASP-Arm_final_2.pdf
- Climate Change Knowledge Portal, Armenia, World Bank, https://climateknowledgeportal.worldbank.org/country/armenia/vulnerability
- Կլիմայի փոփոխությունը և գյուղատնտեսությունը: Երկրի մասին զեկույց, https://documents1.worldbank.org/curated/en/260051468221982009/pdf/733320WP0ARMEN00Armenia0Jun20120Arm.pdf
- ՀՀ կլիմայի փոփոխության մասին երրորդ ազգային հաղորդագրություն, http://www.nature-ic.am/wp-content/uploads/2013/10/3.Armenias-TNC_2015-ARM.pdf
- ՀՀ կլիմայի փոփոխության մասին չորրորդ ազգային հաղորդագրություն, http://env.am/storage/files/fnc-arm.pdf
- Արարատյան դաշտի ատլաս, USAID, ՇՄՆ, http://meteomonitoring.am/page/559
- Շրջակա միջավայրի վիճակի մասին, Տեղեկագիր 2020, http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/Annual-2020.pdf

[8]«Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, 22 ապրիլի 2021 թվականի N 610-Լ:
[9] Հայաստանի Հանրապետության եղանակային, կլիմայական և հիդրոլոգիական ծառայությունների արդիականացման ճանապարհային քարտեզ https://www.unisdr.org/preventionweb/files/63427_134019armenianmodernizingweathercli.pdf

- Հարմարվողականություն կլիմայի փոփոխությանը, http://www.com-east.eu/hy/support/adaptation-to-climate-change/
- Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ վիճակագրական կոմիտե, հրապարակումներ /ըստ տարեթվերի/, https://armstat.am/am/?nid=82
- Կլիմայական ծառայությունների ազգային շրջանակի համար մշակված քարտեզներ, Zoï Environment Network, https://issuu.com/zoienvironment/docs/maps-armenian_agriculture-cc-en

Չնայած նրան, որ տեղական մակարադակում միշտ չէ, որ հնարավոր է ունենալ երկրորդային աղբյուրների տվյալների լայն ընտրություն, այնուամենայնիվ, անգամ սակավ տեղեկատվությունն անհրաժեշտ է դիտարկել:

Համայնքի երեխաներին վերաբերող տվյալների հավաքագրման տեսանկյունից հատկապես անհրաժեշտ է

- ✓ հարցում անել ազգային վիճակագրական ծառայությանը (մարզպետարանին, դպրոցին, մանկական հիմնարկներին) տվյալ համայնքի երեխաների թվաքանակի, սեռատարիքային կազմի, կրթության, ազգության, ընտանեկան և այլ բնույթի տվյալների վերաբերյալ,
- ✓ սոցիալական, այլ համապատասխան ծառայություններից վերցնել տվյալներ հաշմանդամություն ունեցող, քրոնիկ հիվանդություններով, դիսպանսեր հսկողության ներքո, որոշակի պատճառներով դպրոց չհաճախող երեխաների, միակողմանի, երկկողմանի ծնողազուրկ, առանց ծնողների խնամքի, պետական կամ այլ խնամակալության ներքո գտնվող երեխաների, նպաստառու, բազմազավակ ընտանիքների երեխաների վերաբերյալ, ինչպես նաև երեխաների, որոնց ընտանիքում կան հաշմանդամություն ունեցող անձինք:

Շատ էական է նաև հավաքագրել հետևյալ տվյալները.

- ✓ աշխատանքի մեջ անչափահաս երեխաների ներգրավվածության քանակ, նկարագիր,
- ✓ վթարային, հատկապես 3-4 աստիճանի տներում, բնակարաններում կամ ժամանակավոր կացարաններում, տնակներում բնակվող ընտանիքներ, երեխաներ,
- ✓ այլ համայնքից տվյալ համայնքի դպրոց, այլ մանկական հիմնարկներ հաճախող երեխաներ և հաճախման հետ առնչվող խնդիրներ (տրանսպորտ, եղանակային պայմաններ, ճանապարհ և այլն),
- ✓ տվյալ համայնքից հարևան համայնքի դպրոց, այլ մանկական հիմնարկներ հաճախող երեխաներ և հաճախման հետ կապված խնդիրներ (տրանսպորտ, եղանակային պայմաններ, ճանապարհ և այլն),
- ✓ գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների, դպրոցների, այլ կրթական օջախների, շենքերի, խաղահրապարակների, սպորտային հրապարակների տեխնիկական սպասարկման, շահագործման անվտանգության վերաբերյալ:

2. Ուղղակի դիտարկում

Նպատակ

Ուղղակի դիտարկումն իրականցվում է ՎԽԿԲ թիմի անդամների (հնարավորինս դպրոցականների մասնակցությամբ), մարզային փրկարար ծառայության և աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի ներկայացուցիչների կողմից, նպատակ ունենալով գրանցել այն ամենը, ինչը կարող է պարունակել վտանգ, ինչպես նաև նպաստել աղետների ռիսկի նվազեցմանը, մեղմմանը ու կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ուղղված գործողությունների իրականացմանը: Գրանցվում են համայնքից, ՎԽԿԲ գործընթացի համար անհրաժեշտ, առաջնային տպավորությունները, այդ թվում՝ շենք-շինություններից, ենթակառուցվածքներից, սոցիալ-տնտեսական և կենսական կարևոր համակարգերից, հողային և ջրային ռեսուրսներից, մարդու առողջությանը վերաբերող հարցերից, գյուղատնտեսությունից և այլն: Հաճախ համայնքի բնակիչը կարող է ուշադրություն չդարձնել առկա վտանգավոր առարկաների կամ երևույթների վրա, քանի որ դրանք իրեն շրջապատող ամենօրյա առարկաներն ու երևույթներն են: Այդ իսկ պատճառով խմբի կազմում անհրաժեշտ է ներգրավել մարզային փրկարար ծառայության և աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի ներկայացուցիչների: Դիտարկումը կարող է իրականացվել ՎԽԿԲ ողջ գործընթացի ժամանակ:

Նախքան դիտարկումը ձեռնարկելը, կարևոր է զինվել երկրորդային աղբյուրներից ատացված տեղեկատվությամբ, նախապես ձևավորելով կլիմայի տեսանկյունից հետաքրքրություն առաջացնող տարրերի շրջանակը, ինչը թույլ կտա ավելի թիրախային դիտարկում իրականացնել: Առանձին ուշադրության պետք է արժանացնել վտանգավոր գոտիներում կլիմայի փոփոխությունից բխող խնդիրների վրա՝ դեգրադացված/էռոզացված հողեր, վնասված շրջակա միջավայր, սողանքներ, սելավատարեր և այլն: Կարևոր է նաև հաշվի առնել կլիմայական վտանգների հետևանքով ոլորտային կառույցներում և ծառայություններում առաջացող խնդիրները: Դիտարկման ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը կարող է լրացնել այն բոլոր բացերը, որոնք տվյալների հավաքագրման այլ գործիքներով հնարավոր չէ ստանալ: Սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ գործիքն ինքնին սուբյեկտիվ բնույթ է կրում, անհրաժեշտ է այս գործիքի միջոցով ստացված տվյալների իսկությունը ճշտել այլ գործիքներով ստացված տեղեկատվության հետ համադրելով, համայնքի ղեկավարության և բնակչության /հատկապես տարեցների/ հետ շփվելիս, կամ հարցազրույցների ընթացքում:

Ակնկալվող արդյունքներ

Դիտարկումը կատարելիս ՎԽԿԲ թիմը, մարզային փրկարար ծառայության և աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի ներկայացուցիչները տիրապետում են այնպիսի տեղեկատվության, որը և ոչ մի պաշտոնական աղբյուրում չկա: Այդ տեղեկատվությունը կարող է վերաբերվել առարկաների, մարդկանց, երևույթների, հարաբերությունների և այլն: Հավաքված տվյալները սովորաբար լինում են բազմաբնույթ, քանի որ պարունակում են տեղեկատվություն համայնքի ֆիզիկական տվյալների և

կենսագործունեության վերաբերյալ: Կարող են լինել նաև հատուկ նշանակության օբյեկտների սեյսմակայունության գնահատման վերաբերյալ նկատառումներ:

Հավաքագրված տվյալները կարևոր են հետագա վերլուծության և աղետների ռիսկի նվազեցմանն ու կլիմայի փոփոխության հարմարվողականությանը ուղղված ծրագրերի մշակման համար: Տվյալները գրանցման համար առաջարկվում է ստորև բերված ձևաչափը:

ՈՒՂՂԱԿԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Առարկաներ, երևույթներ, մարդիկ, հարաբերություններ	***Նկարագիր***
Բնակավայրեր/Ենթակառուցվածքներ	
Կենսական կարևոր համակարգեր	
Ռիսկային տարածքներ – հանգստի, ժամանցի, հանրային հավաքի վայրեր	
Սոցիալտնտեսական	
Մարդու առողջություն	
Գյուղատնտեսություն	
Ջրային ռեսուրսներ	
Զբոսաշրջություն	
Էներգետիկա	
Վտանգ	

Օրինակ՝

Առարկաներ, երևույթներ, մարդիկ, հարաբերություններ	***Նկարագիր***
Բնակավայրեր/Ենթակառուցվածքներ	
Հիմնական շենք, շինություններ	Կառույցի տեսակ՝ նոր, հին, ամուր, կիսաքանդ, այլ
Արտադրական հզորություն կամ վտանգավոր օբյեկտներ/հանքարդյունաբերություն	Գործող, չգործող, նորակառույց, հին, կիսաքանդ, այլ

Շենք, շինություններ (վարչական, հասարակական, արտադրական՝ անկախ սեփականության ձևից)	
Ճանապարհներ՝ հիմնական, ներքին	Կա, չկա, քանդված, կիսաքանդ, սարքին, այլ
Կամուրջ	Հետիոտն, տրանսպորտային, անցանելի, սարքին, կիսաքանդ, քանդված, կողապատնեշով, այլ
Կոյուղի	Գործող, չգործող, վնասված, մասամբ գործող, այլ ռիսկային վտանգավոր գործոններով՝ հատկապես եթե հարում է դպրոցին, մանկապարտեզին և այլն,
Աղբահանություն	Կա, չկա, մասամբ, համատարած, հակասանիտարական վիճակ, կուտակումներ կենսական, կարևոր վայրերում, (դպրոց, մանկապարտեզ, խաղահրապարակ, սպորտային հրապարակ) և այլն.
Կենսական կարևոր համակարգեր	
Դպրոց, ուսումնական այլ հաստատություն	Կառույցի տեսակը, նոր, հին, ամուր, կիսաքանդ, գործող, չգործող, մուտքի, ելքի մեկ, մեկից ավելի դուռ, մուտքին հարակից թեքահարթակ(ներ), դպրոցի ներսում հաշմանդամություն ունեցող երեխաների համար հարմարեցված ենթակառույցներ, տեխնիկական շահագործում (սպասարկում) , այլ
Բուժարան, հիվանդանոց	Կառույցի տեսակը՝ նոր, հին, ամուր, կիսաքանդ, գործող, չգործող, հաշմանդամություն ունեցող մեծահասակների, երեխաների համար հարմարեցված ենթակառույցներ տեխնիկական շահագործում (սպասարկում), այլ
Գյուղապետարան	Կառույցի տեսակը՝ նոր, հին, ամուր, կիսաքանդ, կառույցի դիրքը՝ հասանելի, հարմար, անվտանգ, վտանգավոր, այլ
Տրանսպորտ, էներգակիր, ջրային ռեզերվուար, հաղորդակցության և կապի համակարգ կամ միջոց, ոստիկանություն, հրշեջ խումբ, այլ	Կա, չկա, գործող, մասամբ գործող, չգործող, այլ
Ռիսկային տարածքներ – հանգստի, ժամանցի, հանրային հավաքի վայրեր	
Սրճարան, սննդի վայր, ռեկրեացիոն գոտիներ, բացօթյա հանգստի տարածքներ, այլ	Բացօթյա շինություն, փակ միջավայր, ազատ մուտքի, ելքի հնարավորություն (քանակը), հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների համար հասանելիությունը, սպասարկող, աշխատող անչափահաս երեխաներ, այլ
Խաղահրապարակ, մարզադաշտ	Կա, չկա, լավ, վատ վիճակ, մասամբ գործող, վտանգավոր, ռիսկային կառույցների

	հարևանությամբ, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների համար հասանելիությունը, այլն
Պատմամշակութային շինություններ (եկեղեցիներ, կամուրջներ, քարավանատներ, բնակատեղիներ, ամրոցներ և այլն)	Գործող, չգործող, կիսաքանդ, վերանորոգված, վերանորոգման ենթակա, մուտքի, ելքի մեկ դուռ, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների համար հասանելիությունը, այլ
Մարդու առողջություն	
Բուժհաստատություն	Առկայություն՝ կա չկա, Տեղադիրքը՝ հասանելի, դժվար հասանելի, անվտանգ, վտանգավոր, այլ Կառույցի տիպը՝ քարե շինություն, տնակ, նոր, հին, ամուր , վթարային, կիսաքանդ, այլ: Գործող, չգործող, խնամված, անխնամ, խմելու ջուր Էլեկտրաէներգիա, սանհանգույց, օդափոխիչ, ջեռուցում, բուժանձնակազմ. Հաշմանդամություն ունեցող մեծահասակների, երեխաների համար հարմարեցված ենթակառույցներ տեխնիկական շահագործում (սպասարկում), այլ
Սանիտարահիգիենիկ/Համաճարակաբանական ծառայություն	Կա, չկա, գործող, չգործող, այլ
Շտապօգնություն	Կա, չկա, հասանելի, անհասանելի, այլ
Գյուղատնտեսություն	
Բուսաբուծություն	Զարգացած, չզարգացած. Այգիներ, բանջարանոցներ, տնամերձ, արտեր՝ խնամված, անխնամ, լքված, չորացած, անջրդի, այլ Ջերմոցային տնտեսություն՝ կա, չկա, այլ
Անասնապահություն	Զարգացած, քիչ զարգացած, հիմնական եկամուտ ապահովող, կողմնակի եկամուտ, անասնաբուժական ծառայություն՝ կա, չկա, անասնակեր՝ բավարար քանակի, անբավարար Գոմեր ‘կա, չկա, նկարագիրը.
Հողեր	Վարելահող՝ մշակվող, անմշակ, հողի դեգրադացիա (ակնհայտ էրոզիա, աղակալում, անապատացում, այլ), Խոտհարք՝ չորացած, սակավախոտ, փարթամ, տապաստանացում Արոտավայրեր՝ հասանելի, դժվար հասանելի, ջրառատ, սակավաջուր, ջրազուրկ, գերարածեցում, այլ
Գյուղմթերքի արտադրություն	Կա, չկա, համայնքային, մասնավոր, այլ
Ջրային ռեսուրսներ	
Խմելու ջրի համակարգ	Բնական աղբյուրներ կան, չկան,

	Ջրակուտակման ավազաններ՝ կան, չկան, մաքրվում են, այլ Ջրի ցանցը՝ գործող, չգործող, վնասված կիսաքանդ, այլ Ջուրը մաքուր է, մաքուր չէ, հասանելի է, հասանելի չէ, այլ
Ոռոգում	Կա, չկա, գործող, մասնակի գործող, վթարային, ինքնահոս, այլ
շաֆտներՍելավատար, Ջրահեռացում	Կա, չկա, հին, նոր, գործող, պատնեշների վիճակը, այլ Ջրահեռացման համակարգ կա, չկա, նոր, վատ վիճակում, գործող, չգործող, այլ
Գետեր, լճեր, ջրամբարներ, խմոցներ, այլ	Կա, չկա, օգտագործվում է որպես ջրային պաշար, չի օգտագործվում, աղտոտված է, ճահճակալած է, այլ
Էներգետիկա	
Էլեկտրական էներգիայի մատակարարում	Հիմնական, գրաֆիկով, հաճախակի անջատումներ, այլ
էլեկտրասյուներ, էլեկտրահաղորդալարեր, բարձրավոլտ էլեկտրացանցեր և աշտարակներ	Հին, նոր, դիրքը փոխած՝ թեքված էլեկտրասյուներ, այլ
Էլեկտրաենթակայան	Կա, չկա, հին, նոր, այլ
Արտաքին լուսավորություն	Կա, չկա, այլ
Էներգիայի աղբյուրներ	ՀԷԿ՝ կա, չկա, այլ
Զբոսաշրջություն	
Հյուրատներ, հյուրանոցներ	Կա, չկա, հին, վերակառուցված, նոր, այլ
Ճանապարհներ	Հասանելի, անհասանելի, վատ, լավ վիճակում, վտանգավոր, անվտանգ, այլ
Երթուղիներ	Կա, չկա, անվտանգ, վտանգավոր, այլ
Շրջակա միջավայր	Մաքուր, խնամված, գրավիչ, աղտոտված, աղբի կուտակումներ, խախտված լանդշաֆտներ, այլ
Զբոսաշրջային ծառայություններ	Վրանային ճամբարներ, տեղեկատվական կենտրոններ, ցուցանակներ, հանդերձանքի և սարքավորումների տրամադրման կետեր, այլ
Վտանգ	
Վառելիք, գազալցակայան	Կա, չկա, հակահրդեհային միջոցների առկայություն, բացակայություն, մանկական հիմնարկների, դպրոցի հարևանությամբ, այլն
Ջրափոսեր, չհոսող ջուր	Խորը, ճահճացած, լճացած, այլ
Ականապատված տարածքներ	Կա, չկա, մոտավոր մակերեսը
Սողանք	Սողանքային մարմին, ակտիվ սողանքային գոտի, սելավներ, հեղեղներ, քարաթափեր, այլ

Հրդեհավտանգ տարածքներ	Չորացած անտառային և խոտածածկ տարածքներ, այլ

3. Սխեմատիկ պատկերում

Նպատակ

ՎԽԿԲ տվյալների հավաքագրման փուլի կարևորագույն գործիքներից մեկը սխեմատիկ պատկերումն է, որով ձևավորվում են աղետավտանգ ու ռիսկային տեղանքների ու վայրերի, ինչպես նաև համայնքի կարողությունների և խոցելիության սխեմատիկ պատկերները: Սխեմատիկ պատկերման նպատակն է համայնքում ակնառու դարձնել այն հիմնական ռիսկային գործոններն ու տեղանքները, որոնք առօրյայում բնակիչները կարող են չնկատել կամ ուշադրություն չդարձնել: Ուսումնասիրության ընթացքում կատարվում են սխեմատիկ և վիզուալ գրանցումներ, լուսանկարվում են նաև վտանգավոր և խոցելի տարածքները: Հավաքված նյութերը տեղադրվում են համացանցից (Google earth) դուրս բերված սխեմատիկ պատկերի վրա: Առկայության դեպքում, կարող են օգտագործվել նաև տարածքի անօդաչու թռչող սարքերի օգնությամբ ստացված պատկերները: Նյութերը սխեմատիկ պատկերի վրա նշվում են որևէ գունային տարբերանշանով, օրինակ՝ դեղին գույնով կարելի է նշել խոցելիությունը, կարմիր գույնով՝ վտանգը, կանաչով՝ կարողությունը: Սխեմատիկ պատկերումը ստեղծում է համայնքին սպառնացող վտանգների, խոցելիության և կարողությունների համադրման ակնառու հնարավորություն: Այն, իր հերթին, հնարավորություն է ընձեռում հետազոտող թիմին պատկերացում կազմել վտանգներից յուրաքանչյուրի նկատմամբ համայնքի/բնակավայրի համակարգերին բաժին ընկնող ռիսկերի վերաբերյալ:

Սխեմատիկ պատկերումը իրականացնելիս մարդկանց պետք է խնդրել, որպեսզի նկարագրեն ոչ միայն ներկա իրավիճակը, այլև այն, թե ինչպես կարող է այն փոխվել: Սխեմատիկ պատկերը հնարավորինս պետք է տեղեկատվություն տրամադրի շրջակա միջավայրի հիմնական փոփոխությունների մասին, ինչպիսիք են հատված անտառային տեղամասերը, հեղեղավտանգ տարածքները, էրոզացված հողերը և այլն: Ընդ որում, մինչև կլիմայական որևէ տեղեկատվություն կրող նշումներ անելը, անհրաժեշտ կլինի ճշտել՝ արդյո՞ք դիտարկվող փոփոխությունները կապված են կլիմայի փոփոխության հետ, թե պայմանավորված են այլ գործոններով: Հավաքված տեղեկատվությունը հիմք կարող է հանդիսանալ նշելու համար այն վայրերը, որտեղ հնարավոր են ապագա փոփոխություններ: Սա ցույց կտա նաև, թե կլիմայական փոփոխությունների տեսանկյունից ո՞ր վայրերն են ենթադրվում առավել խոցելի:

Սխեմատիկ պատկերման գործընթացը պարտադիր ներառում է մանկական հիմնարկները, դպրոցները, խաղահրապարակը, մարզադաշտը՝ վերջիններիս շրջակայքը, վտանգի ակնհայտ և թաքնված գործոնները և այլն:

Սխեմատիկ պատկերված տեղանքը պետք է արտացոլի նաև, թե որքանով է անվտանգ կամ հարմարեցված մանկական հաստատությանը, դպրոցին հարող ճանապարհը

հաշմանդամություն ունեցող երեխաների համար (ճանապարհ, ենթակառույցների հասանելիություն և անվտանգություն, թեքահարթակներ և այլ հնարավորություններ):

Կարևոր նշանակություն ունի սահմանամերձ համայնքներում ականապատված և վտանգավոր տարածքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը: Տվյալ համայնքների բնակիչները պետք է իրազեկված լինեն վտանգված գոտիների մասին՝ հետագայում դժբախտ պատահարներից զերծ մնալու համար: Սխեմատիկ պատկերման ժամանակ պետք է հաշվի առնվեն ականապատված տարածքները, դրանց չափերը և կատարվեն համապատասխան նշումներ սխեմատիկ պատկերի վրա:

Ակնկալվող արդյունքներ

Սխեմատիկ պատկերումն իրականացվում է ՎԽԿԲ թիմի անդամների (հնարավորինս դպրոցականների մասնակցությամբ), մարզային փրկարար ծառայության, աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի ներկայացուցիչների ներգրավմամբ: Չնայած ժամանակատար լինելուն, այն շատ կիրառելի գործիք է և համայնքի համար ստեղծում է իր կարողությունների, հզորությունների, վտանգների ու ռիսկերի համադրման համար ակնառու հնարավորություն: Ստացված արդյունքները քննարկվում են համայնքի հետ համատեղ, ենթարկվում են վերլուծության, կրկին մշակվում և կատարվում լրացումներ:

Որպես օրինակ ներկայացված է ՀՀ Տավուշի մարզի Իծաքար համայնքի ՎԽԿԲ սխեմատիկ պատկերը:

ՀՀ Տավուշի մարզի Իծաքար համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման սխեմատիկ պատկեր

-Կարողություն, -խոցելիություն, -վտանգ

Կարկտահարություն, Ցրտահարություն, Ուժեղ քամիներ, Սելավ, Սողանք, Երաշտ, Առատ տեղումներ, Խոտածածկ տարածքների և անտառների հրդեհ, - Վարելահողեր, Լուսավորված և ասֆալտապատ ճանապարհ

1- Համայնքապետարան/բուժկետ/, ***2***- դպրոց/նախակրթարան/, ***3***- կամուրջ, ***4***- վթարային տներ, ***5***- խմելու ջրի ջրամբար

4. Հարմարեցված (ճկուն) հարցազրույց

Նպատակ

Հարմարեցված հարցազրույցի բոլոր հարցերը նախորոք կարող են նախապատրաստվել, սակայն հարցազրույցի ընթացքում կարող են դրանց մի մասը չտրվել կամ օգտագործվել հարցազրույցը զուտ ուղղորդելու նպատակով կամ նոր հարցեր քննարկվել՝ կախված խնդրից:

Այն կիրառվում է աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի ներկայացուցչի կողմից՝ թիրախային հարցերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու կամ տրամադրելու համար: Այն անցկացվում է անհրաժեշտության դեպքում և պարտադիր է, որ հարցազրույց վարող աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի ներկայացուցիչն ունենա նմանատիպ զրույցների վարման անհրաժեշտ փորձ:

Մասնակիցներին պետք է հարցնել համայնքային կյանքի տարբեր ոլորտներում (առողջապահություն, գյուղատնտեսություն, ձկնաբուծություն, և այլն) դիտարկվող փոփոխությունների վերաբերյալ նրանց պատկերացումների մասին՝ ինչո՞վ են պայմանավորված այդ փոփոխությունները, ի՞նչ իրադարձությունների հետևանքով են դրանք առաջացել, ի՞նչ հետևանքներ են ունեցել այդ փոփոխությունները և, մասնավորապես, կապվա՞ծ են արդյոք այդ փոփոխությունները կլիմայի փոփոխությամբ պայմանավորված երևույթների հետ: Մասնակիցներից պետք է հնարավորինս տեղեկություն ստանալ նաև տեղի ունեցած եղանակային ծայրահեղ դրսևորումների կամ տարիների ընթացքում նկատված ջերմաստիճանի և տեղումների փոփոխությունների վերաբերյալ՝ ինչպե՞ս է դա արտահայտվել և, ըստ իրենց, ի՞նչ հետևանքներ է ունեցել:

Ակնկալվող արդյունքներ

Հարմարեցված հարցազրույցը շոշափում է աղետների ռիսկի կառավարման ոլորտի՝ ինչպես նաև կլիմայի փոփոխության, կլիմայական ռիսկերին առնչվող հիմնական թեմաները: Հարցերը նպատակամղվում են, հատկապես, համայնքին սպառնացող վտանգների, խոցելիության, համայնքի աղետներին արձագանքման կարողությունների, կլիմայի փոփոխության և հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների ազդեցության վերաբերյալ տեղեկություն ստանալու կամ տրամադրելու սկզբունքով: Անհրաժեշտության դեպքում որոշակի հարցեր կարող են նաև ձևավորվել և հարցադրվել անմիջապես հարցազրույցի ընթացքում:

Հարմարեցված հարցազրույցը հարցաշար չէ և վարվում է կոնկրետ թեմատիկայի շուրջ ազատ քննարկման ու մտքերի փոխանակման միջոցով: Հարցազրույցից ակնկալվում է ստանալ ոչ միայն հարցերի պատասխաններ, այլ նաև դրանց հետ առնչվող մեկնաբանություններ: Օրինակ.

Առարկաներ, երևույթներ, մարդիկ, հարաբերություններ	***Նկարագիր***
Առօրեական	Հիմնական աշխատանք, զբաղվածություն, պարապուրդ, գործազրկություն, այլ
Սնունդ	Սննդակարգում հացամթերք, կաթնամթերք, մսեղեն, այլ կամ բացակայում են, պակաս են առօրյա սննդակարգից
Գյուղի բնակիչների հարաբերությունները (վարվելաձևը, վերաբերմունքը միմյանց նկատմամբ) այլ	Իրար սատարող, աջակցող, հարգալից, անտարբեր և այլն
Կարողություններ	Ավտոմեքենա, այլ տեղաշարժման միջոցներ, ընտանի կենդանիներ կաթնատու, մսատու, շուկա արտահանելու ապրանքներ, գյուղմթերք, այլ եկամուտներ
Խոցելիություն	Ցածր, անփոփոխ եկամուտ, սոցիալական նպաստ, մասնակի, բացակայող ջեռուցման համակարգ, այլ
Հմտություններ	Առաջին օգնության ցուցաբերում, այլ
Ոչ ֆորմալ համայնքային լիդերներ, հեղինակություններ, հարգված անձնավորություններ	Առկա են, բացակայում են, ձեռնարկող են, աջակցող, այլ

Գոյություն ունի հարմարեցված հարցազրույցի վարման մի քանի մոտեցում: Դրանք են.

ա) ՎԽԿԲ գնահատման հարցազրույց համայնքի ղեկավարի հետ ***(հավելված 4),***

բ) անհատական հարցազրույցներ. այս մոտեցումն արդյունավետ է այն դեպքում, երբ քննարկվող թեման խիստ անհատական է, և դժվար է խոսել դրա մասին ամբողջ խմբի ներկայությամբ,

գ) խմբակային հարցազրույցներ. այս հարցազրույցները չեն կրում պարտադիր բնույթ և վարվում են մասնագիտական որոշակի խմբերի հետ, օրինակ՝ բժիշկների, ուսուցիչների և այլն: Սովորաբար նման մեթոդը կիրառվում է, եթե համայնքում առկա են անհատի հետ առնչվող որոշակի խնդիրներ, օրինակ՝ առողջական: Աղետների ռիսկի նվազեցմանն առնչվող խնդիրները սովորաբար խմբակային հարցազրույցների վարման կարիք չունեն, քանի որ թիրախային (ֆոկուս) խմբերի հետ ունեցած քննարկումները լիովին բավարար են:

5. Քննարկումներ թիրախային (ֆոկուս) խմբերում

Նպատակ

Թիրախային (ֆոկուս) խմբերը ձևավորվում են համայնքի այն անհատներից, որոնք պատկանում են որոշակի մասնագիտական, տարիքային, սեռային կամ սոցիալական խմբերին, այն է՝ վարչական աշխատողներ, բուժանձնակազմ, ուսուցիչներ, ֆերմերներ, կանայք, տարբեր տարիքային խմբերի երեխաներ (տղաների և աղջիկների հավասար ներգրավվածություն, հաշմանդամություն ունեցող երեխաների առկայության դեպքում՝ նրանց ներգրավվածություն, օտարալեզու երեխաների մասնակցություն): Դպրոցականներից ձևավորված ֆոկուս խմբերում քննարկման խնդրո առարկան, հարցերը ***(հավելված 6, 7)*** նախօրոք ներկայացվում են դպրոցի ուսուցչի, հոգեբանի ուշադրությանը՝ ակնկալելով մանկավարժի մասնագիտական խորհուրդը: Թիրախային (ֆոկուս) խմբերում քննարկումներ կարող են իրականացնել միայն ՎԽԿԲ անցկացնելու փորձ ունեցող մասնագետները (քննարկվող հարցերն են՝ դպրոցը որպես անվտանգ, վտանգավոր, ռիսկային միջավայր, աղետների ռիսկի նվազեցման ոլորտի իմացություն, արտակարգ իրավիճակներում վարվելականոններ, միջավայրի մասին իմացություն, ընտանիք, տուն և աղետների ռիսկի նվազեցմանն առնչվող խնդիրներ, համայնքին սպառնացող վտանգներ, վտանգի նվազեցմանն ուղղված իրականացված միջոցառումների վերաբերյալ իմացությունը և այլն) ***(հավելված 5)***:
Այս խմբերը ձևավորվում են նաև համակարգողի կամ համայնքի ղեկավարի/բնակավայրի վարչական ղեկավարի անմիջական օգնությամբ, որի նպատակն է հստակեցնել բոլոր այն խնդիրները, որոնք կապված են համայնքում իրազեկվածության մակարդակի հետ: Թիրախային (ֆոկուս) խմբերում քննարկումները նպաստում են տարբեր տեսակի տեղեկությունների հավաքագրմանը: Այդ քննարկումները կարող են կենտրոնանալ կոնկրետ թեմայի շուրջ, որտեղ խմբի անդամներն ազատ կարողանում են արտահայտվել: Ընդ որում, խումբը պետք է կարողանա ճիշտ ձևով անցկացնել քննարկումը, կառավարել ընթացքը՝ պահպանելով դինամիկան: Քննարկումները բացահայտում են իրական ռիսկերի նկատմամբ այն շերտերի խոցելիության աստիճանը, որոնց ներկայացուցիչներն ընդգրկված են թիրախային (ֆոկուս) խմբերում:

Հնարավորինս ներգրավել նաև տարիքով մարդկանց, որոնք կարող են էական տեղեկություններ հաղորդել ժամանակի ընթացքում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ: Նմանատիպ մոտեցում պետք է կիրառել նաև առանձին ոլորտներում առկա խնդիրները քննարկելիս, օրինակ՝ մարդու առողջության, գյուղատնտեսության, շրջակա միջավայրի, բնակավայրի և ենթակառուցվածքների, կենսապահովման և այլն: Պետք է աշխատել հնարավորինս ապահովել տղամարդկանց և կանանց հավասար մասնակցությունը, քանի որ տարբեր երևույթների մասին նրանց ունեցած իմացությունը կամ մեկնաբանությունները

կարող են էականորեն տարբերվել: Ոչ պակաս կարևոր է տեղեկատվությունը եղանակի կանխատեսման ավանդական մոտեցումների/ձևերի մարդկանց իմացության վերաբերյալ, հաշվի առնելով, որ պաշտոնական կանխատեսումները, ագրո-օդերևութաբանական ծառայություններն ու տեղական մակարդակում կլիմայի փոփոխության առանձնահատկությունները հաճախ հասանելի չեն: Այս ամենը, համակցելով մյուս գործիքներով հավաքագրված տեղեկատվության հետ, կարող է լավ հիմք հանդիսանալ հետագայում ոչ միայն ռիսկերի նվազեցման, այլ նաև կլիմայի հարմարվողականության ծրագրերը մշակելիս և պլանավորելիս: Քննարկումներն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով գերադասելի է յուրաքանչյուր թիրախային խմբի համար մշակել թեմատիկ հարցերի շրջանակ, որը թույլ կտա ուղղորդել քննարկումների ընթացքը:

Քաղաքային համայնքներում թիրախային խմբերը ոլորտային ներկայացուցչության սկզբունքով ձևավորելը շահեկան է, քանի որ հնարավորություն է ստեղծում կլիմայի փոփոխության ոլորտային ազդեցությանը անդրադառնալու համար, ոլորտային ռիսկերը բացահայտելու և հարմարվողականության ոլորտային լուծումներ ձևավորելու համար: Գյուղական համայնքներում նման մոտեցումը քիչ հավանական է՝ ընդգծված ոլորտային բազմազանություն չլինելու պատճառով: Սակայն, անգամ այս պարագայում, թիրախային խմբերում հնարավոր է քննարկել առանձին ոլորտներին վերաբերող հարցեր, ինչպիսիք են՝ մարդու առողջությունը, գյուղատնտեսությունը, ջրային ռեսուրսները, բնակավայրերն ու ենթակառուցվածքները և այլն:

Թիրախային խմբերում քննարկումները նպատակ ունեն վեր հանելու մասնակիցների իրազեկվածությունը, տեսակետը համայնքի համար կենսական նշանակություն ունեցող խմբերի՝ այդ թվում, համայնքին սպառնացող վտանգների վերաբերյալ: Կլիմայի փոփոխության տեսանկյունից էական է ծավալել առանձին ոլորտներին վերաբերող քննարկումներ (մասնավորապես քաղաքային միջավայրում), հնարավորինս պարզելու համար թե ըստ խմբի անդամների ինչ ազդեցություն է ունենում կլիմայի փոփոխությունը այս կամ այն ոլորտի վրա (հավելված 9):

Ակնկալվող արդյունքներ

Աշխատանքը թիրախային (ֆոկուս) խմբերի հետ ՎԽԿԲ գործընթացում շատ կարևորվում է, քանի որ արդյունքում ձևավորվում են համայնքի զարգացման որոշակի ոլորտների՝ գյուղատնտեսական, բնապահպանական, առողջապահական, քաղաքաշինական, հողօգտագործման և այլն, խոցելիության աստիճանը և ռիսկերը, ներառյալ կլիմայի փոփոխությամբ պայմանավորված, ինչպես նաև քննարկվում են համայնքի համար կենսական նշանակության խնդիրների լուծմանն ուղղված հնարավոր ձեռնարկումները: Նման քննարկումները լավ նախադրյալներ են ստեղծում հետագայում համալիր մոտեցումներ

ձևավորելու համար՝ ռիսկերի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության լուծումները ոլորտային զարգացման պլանների հետ համադրելու և ինտեգրելու նպատակով:

6. Սեզոնային օրացույց

Նպատակ

Սեզոնային օրացույցն աղյուսակային մեթոդ է և հնարավորություն է տալիս նկարագրել մեկ տարվա ընթացքում համայնքում տեղի ունեցած փոփոխությունները:

Սեզոնային օրացույցը ցույց է տալիս տարվա ընթացքում տեղի ունեցած աղետները, դրանց ազդեցությունը, կլիմայական փոփոխությունները, բռնկված հիվանդությունները, եկամուտների նվազումը կամ աճը և այլն:

Սեզոնային օրացույցը հնարավորություն է տալիս պարզելու նաև, թե արդյո՞ք սեզոնայնության տեղաշարժ է նկատվում, ինչը հնարավոր է բացասական ազդեցություն ունենա առողջության, ապրուստի միջոցների, կենսական այլ կարևոր նշանակություն ունեցող ոլորտների վրա: Առաջարկվում է նախ դիտարկել ներկա իրավիճակը և հետո անդրադառնալ վերջին տասնամյակներում տեղի ունեցած փոփոխություններին, դիտարկման համար ընտրելով հնարավորինս երկար ժամանակահատված:

Գործիքը կարող է օգտագործվել բնակչության իրազեկությունը բարձրացնելու նպատակով, նկատի ունենալով, որ եղանակային օրինաչափությունների փոփոխությունների լույսի ներքո սեզոնային պլանավորման ավանդական մոտեցումները վերանայելու կարիք կարող է առաջանալ: Այն կարող է օգտագործվել ցույց տալու համար, թե ինչպես է փոփոխվում մշակաբույսերի ծաղկման, տնկման և բերքահավաքի ժամանակացույցը, եղանակային և առողջության հետ կապված նոր վտանգներ կարող են ի հայտ գալ կամ հները կարող են հայտնվել տարվա ոչ այն ժամանակին, երբ դրանք սովորաբար հայտնվում էին:

Կլիմայի փոփոխության ազդեցության որոշակի միտումը արձանագրելու համար սեզոնային օրացույցը համալրված է երկու աղյուսակներով.

- տարեկան տեղումների քանակի աճի/նվազման աստիճանը
- ջերմաստիճանային շեղումները (բարձրացում/նվազում):

Ակնկալվող արդյունքներ

Օրացույցը լրացվում է ընդհանուր ժողովի ժամանակ, որտեղ քննարկվում են տարվա եղանակների հետ կապված բնակավայրում տեղի ունեցող նշանակալից երևույթները ներառյալ սպառնացող վտանգների ակտիվացումը: Սեզոնային օրացույցի և աղյուսակների տվյալները բավականին արժեքավոր են, քանի որ համադրվում են նաև պաշտոնական վիճակագրության, ինչպես նաև ռիսկերի գնահատման համար անհրաժեշտ բոլոր այն տվյալների հետ, որոնք կհավաքագրի ՎԽԿԲ թիմը:

Սեզոնային օրացույց

ՍԵԶՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ/ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ	***ՀՈՒՆՎԱՐ***	***ՓԵՏՐՎԱՐ***	***ՄԱՐՏ***	***ԱՊՐԻԼ***	***ՄԱՅԻՍ***	***ՀՈՒՆԻՍ***	***ՀՈՒԼԻՍ***	***ՕԳՈՍՏՈՍ***	***ՍԵՊՏԵՄԲԵՐ***	***ՀՈԿՏԵՄԲԵՐ***	***ՆՈՅԵՄԲԵՐ***	***ԴԵԿՏԵՄԲԵՐ***
Սոցիալ-տնտեսական												
Բարձր եկամուտներ												
Ցածր եկամուտներ												
Արտագաղթ												
Անչափահաս երեխաների աշխատուժի օգտագործում												
Արտագնա աշխատանքներ												
Վերադարձ արտագնա աշխատանքներից												
Բերքահավաք												
Պարապուրդ												
Անասունների մորթ												
Սերմնացան												
Խոտհունձ												
Առողջապահություն												
Գրիպի համաճարակ												
Աղիքային ինֆեկցիաներ												
ՔՈՎԻԴ-19-ով վարակվածների աճ												
Երեխաների շրջանում հիվանդությունների աճ												
Ալերգիկ հիվանդությունների աճ												
Սրտանոթային հիվանդությունների աճ												
Քրոնիկ հիվանդություններով տառապողների առողջական վիճակի վատթարացում												
Արևահարում												
Տուբերկուլյոզ												
Վտանգներ												
Երկրաշարժ												
Կարկուտ												

Ջրհեղեղ												
Երաշտ												
Սաստիկ շոգ												
Ցրտահարություն												
Հորդառատ/տևական տեղումներ												
Գետի վարարում և հեղեղում												
Անտառային հրդեհներ												
Ուժեղ քամիներ												
Քարաթափություն												
Հրդեհ												
Սողանք												
Սելավ												
Ձնաբուք												
Ձնահյուս												
Այլ երևույթներ												
Անասնահամաճարակներ												
Ականապատված տարածքների հետ կապված վտանգներ												
Հրադադարի խախտում												

Համայնքում տեղումների տարեկան քանակի ավելացում կամ նվազում:

N	Տարեկան տեղումների քանակի ավելացման աստիճանը	Երբվանից՝ Վերջին (նշեք) 1 – 5 տարին 2 – 5-10 տարին 3 – 10-15 տարին	Տարվա ո՞ր եղանակներին (նշեք) ՁՄ/ԳԱ/ԱՄ/ԱՇ	Տարեկան տեղումների քանակի նվազման աստիճանը	Երբվանից՝ Վերջին (նշեք) 1 – 5 տարին 2 – 5-10 տարին 3 – 10-15 տարին	Տարվա ո՞ր եղանակներին (նշեք) ՁՄ/ԳԱ/ԱՄ/ԱՇ
1.	Թույլ					
2.	Միջին					
3.	Բարձր					
4.	Շատ բարձր					

Համայնքում ջերմաստիճանային շեղումներ (բարձրացում/նվազում):

N	Ջերմաստիճանի բարձրացման աստիճանը	Երբվանից՝ Վերջին /նշեք/ 1 – 5 տարին 2 – 5-10 տարին 3 – 10-15 տարին	Տարվա ո՞ր եղանակներին /նշեք/ ՁՄ/ԳԱ/ԱՄ/ԱՇ	Ջերմաստիճանի նվազման աստիճանը	Երբվանից՝ Վերջին /նշեք/ 1 – 5 տարին 2 – 5-10 տարին 3 – 10-15 տարին	Տարվա ո՞ր եղանակներին /նշեք/ ՁՄ/ԳԱ/ԱՄ/ԱՇ
5.	Թույլ					
6.	Միջին					

7.	Բարձր					
8.	Շատ բարձր					

Լրացման ձև

Սեզոնային օրացույցն աղյուսակ է, որի յուրաքանչյուր ամսվան համապատասխանող սյունյակի վանդակները լրացվում են «x» նշանով միայն այն դեպքում, եթե տվյալ տողում ներկայացված իրադարձությունն իրոք տեղի է ունեցել:

Օրինակ՝ «x» նշանով կնշվի «հոկտեմբեր» սյունյակի և «բարձր եկամուտներ» տողի հատման կետին համապատասխանող վանդակը, եթե իրոք այդ ամսվա ընթացքում համայնքի բնակիչն ունեցել է բարձր եկամուտ: Հակառակ դեպքում վանդակը կմնա դատարկ:

Սեզոնային օրացույցում ընդգրկված տողերի քանակը ենթակա է փոփոխության, այսինքն կարող են ավելացվել կամ պակասեցվել համայնքի բնակիչների կողմից, եթե «սոցիալ-տնտեսական», «առողջապահություն», «վտանգներ, աղետներ» բաժիններում ներկայացված տողերը սեզոնային լրիվ պատկերը չեն տալիս: Որպես օրինակ ներկայացված են Զովունի համայնքին բնորոշ վտանգները և ռիսկերը, որոնք քննարկվել են վտանգների, խոցելիության կարողությունների գնահատման ընդհանուր ժողովի ժամանակ:

ՍԵԶՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ/ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ	***ՀՈՒՆՎԱՐ***	***ՓԵՏՐՎԱՐ***	***ՄԱՐՏ***	***ԱՊՐԻԼ***	***ՄԱՅԻՍ***	***ՀՈՒՆԻՍ***	***ՀՈՒԼԻՍ***	***ՕԳՈՍՏՈՍ***	***ՍԵՊՏԵՄԲԵՐ***	***ՀՈԿՏԵՄԲԵՐ***	***ՆՈՅԵՄԲԵՐ***	***ԴԵԿՏԵՄԲԵՐ***
Սոցիալ-տնտեսական												
Բարձր եկամուտներ									X	X		
Ցածր եկամուտներ					X							
Արտագաղթ					X							
Արտագնա աշխատանքներ				X	X							
Վերադարձ արտագնա աշխատանքներից											X	X
Բերքահավաք							X	X	X	X	X	
Պարապուրդ	X	X										X
Անասունների մորթ												X
Սերմնացան			X						X			
Առողջապահություն												
Գրիպի համաճարակ			X	X					X	X	X	X
Աղիքային ինֆեկցիաներ												
Տուբերկուլյոզ												
Սիրտ անոթային			X	X					X	X		
Վտանգներ												

Ցրտահարություն			X	X	X							
Երաշտ							X					
Կարկտահարություն					X	X						
Շրջակա միջավայրի աղտոտվածություն					X					X		
Ուժեղ քամիներ				X	X				X	X		
Այլ երևույթներ												

7. <u>Պատմական օրացույց</u>

Նպատակ

Պատմական օրացույցի նպատակն է բացահայտել տասնամյակների ընթացքում տարբեր երևույթների և փոփոխությունների ազդեցությունը համայնքի կենսագործունեության և զարգացման վրա:

Այստեղ կարևոր է անդրադառնալ տեղի ունեցած և էական վնաս հասցրած երևույթներին: Մասնավորապես, խոսքը վերաբերվում է կլիմայական վտանգավոր երևույթներին, ինչպիսիք են կարկուտը, սելավը, երաշտը և այլն: Կարելի է պարզել, թե արդյոք այդ երևույթների դրսեվորումներում նկատվում են ակնառու փոփոխություններ, օրինակ՝ հաճախականության կամ ուժգնության ավելացում, հիվանդությունների աճ, որոնք կարող են պայմանավորված լինել կլիմայով, և այլն: Պետք է հաշվի առնել, որ նման տեղեկությունները սուբյեկտիվ են և կարիք կա ստացված տեղեկատվությունը մեկ անգամ ևս ճշտելու վերլուծության ընթացքում:

Ակնկալվող արդյունքներ

Հնարավոր է լինում ստանալ անցյալի մի շարք իրադարձությունների պատկերները, անել եզրակացություններ և տալ առաջարկներ, որոնք կարող են համայնքի համար օգտակար լինել ռիսկերի նվազեցման, կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի պլանավորման համար:

ՊԱՏՄԱԿԱՆ ՕՐԱՑՈՒՅՑ

Ժամանակահատված	Աղետներ	Բնակչություն	Երեխաներ	Շենք/շինություն	Այգիներ, անտառներ	Անասուններ, հողեր	Առողջապահություն	Ենթակառուցվածքներ	Կրթություն, դպրոց	Բիզնես

1970										
1980										
1990										
2000										
2010										

<u>Լրացման ձև</u>

Օրացույցը լրացվում է համայնքի բնակիչների հետ ընդհանուր ժողովի ընթացքում: Պահպանվում է կանանց և տղամարդկանց հավասարության սկզբունքը, նաև ապահովվում է ծերերի և երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը: Մեծահասակների դերն անփոխարինելի է հատկապես անցյալի հետ կապված տեղեկատվություն ստանալու հարցում: Նշվում են բոլոր այն առանձնահատկությունները, դեպքերը, իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել համայնքի կյանքում և նրա զարգացման ընթացքում: Բացահայտվում են տարիների ընթացքում շրջակա միջավայրի և համայնքի կենսագործունեության միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապը, վտանգավոր երևույթների զարգացման միտումները:

Օրինակ՝ Զովունի համայնքում բացահայտված տասնամյակների ընթացքում տարբեր երևույթների և փոփոխությունների ազդեցությունը համայնքի զարգացման վրա:

Ժամանակացույց	Բնակչություն	Շենք/շինություն	Անասուն/Հողեր	Բիզնես	Ենթակառույցներ	Կրթություն/Մշակույթ	Այգիներ/Անտառներ	Երեխաներ	Այլ
1970			____	$$$					
1980	↗	↗	↗	↗	↗	↗	____	↗	
1990	↗	↗↘	____	↗	↗	↗	____	↗	1988թ. երկրաշարժ
2000	↗	↗	↗↗	↗	⇉	↗↗	____	↗	կարկտահարություն, երաշտ

2010-2016	↘	↗	↘ →	2010 ↗ ↘	⇗	⇒	——	↘	ցրտահարություն, կարկտահարություն, ուժեղ քամի

8. <u>Հաստատութենական շրջանակ</u>

Նպատակ

Համայնքում անցկացվող ընդհանուր ժողովի ժամանակ, համայնքային մասնակցային սկզբունքով (տեղական ինքնակառավարման մարմիններ, հիմնարկ-ձեռնարկություններ, կրթական օջախներ, առողջապահական կազմակերպություններ, բնակիչներ և այլն) լրացվում է աղյուսակ, որի նպատակն է բացահայտել և դասակարգել պետական և ոչ պետական, հասարակական և միջազգային այն կառույցները, խմբերն ու անհատները, որոնք ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունեն կամ ունեցել են համայնքի սոցիալական կյանքի և զարգացման ոլորտների վրա, հատկապես ուշադրություն դարձնելով երեխայանպաստ գործունեություն ծավալող, հաշմանդամություն ունեցող երեխաների կենսական կարևորության, առաջնային և այլ հարցերը կարգավորող կառույցների վրա: Այդ կառույցները որոշվում են ըստ համայնքի կյանքում ունեցած իրենց կարևորության և ազդեցության (դրական, բացասական կամ անորոշ) աստիճանի:

Այստեղ պետք է նախատեսել եղանակային տեղեկատվության և կանխատեսումների, վաղ ազդարարման, ագրո-օդերևութաբանական ծառայությունների, ինչպես նաև պետության կողմից առաջարկվող գյուղատնտեսական կլիմայակայուն նոր տեխնոլոգիաների և ֆինանսական մեխանիզմների մասին տեղեկատվության հասանելիության հարցը՝ արդյո՞ք համայնքում առկա է նման խնդիրներով զբաղվող որևէ հաստատություն կամ մեխանիզմ: Եթե այո, ապա ինչքանով է հասանելի և ինչ դերակատարում ունի:

Ակնկալվող արդյունքներ

ՎԽԿԲ գործընթացում կարևորվում է շահագրգիռ կողմերի մասին տվյալների հավաքագրումը, քանի որ աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների և նախագծերի իրականացման ժամանակ կարող է առաջանալ նրանց մասնակցության, աջակցության, միջամտության կարիք: Հիմնական շահագրգիռ կողմերը քննարկման մասնակիցների կողմից գնահատվում են 1-ից 5 միավորով՝ ըստ համայնքի վրա ունեցած իրենց ազդեցության (տարբեր ոլորտներում իրենց աջակցության, տվյալ համայնքում փաստացի գործելակերպի) և համայնքի համար կարևորության (կառույցների կարևորությունը, արժեքը համայնքի առօրյա և տնտեսական կյանքում): Գնահատականները լրացվում են աղյուսակում: Ազդեցությանն ու կարևորությանը տրված գնահատականները միջինացվում են և համեմատվում: Այսպիսի

մոտեցումը հնարավորություն է տալիս համայնքին կողմնորոշվել հիմնական շահագրգիռ կողմերի ընտրության հարցում՝ աղետների ռիսկի նվազեցման միջոցառումներին հնարավոր մասնակցություն կամ աջակցություն ցուցաբերելու համար:

Հաստատութենական շրջանակ

Կառույցներ, խմբեր, անհատներ	Ազդեցություն, մասնակցություն	Միջինը	Կարևորություն	Միջինը
Տեղական ինքնակառավարման մարմիններ				
Մարզպետարան				
Միջազգային կազմակերպություն				
Էկոնոմիկայի նախարարություն (գյուղատնտեսություն)				
Արտակարգ իրավիճակների նախարարություն				
Շրջակա միջավայրի նախարարություն (Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն)				
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն				
Կրթություն և առողջապահություն				
ՄԱԶԾ				
ՅՈՒՆԻՍԵՖ				
Սեյվ դը Չիլդրեն				

Օրինակ՝

Կառույցներ, խմբեր, անհատներ	Ազդեցություն, մասնակցություն	Միջինը	Կարևորություն	Միջինը
Տեղական ինքնակառավարման մարմիններ	(4-5-2-3-4)	3.6	(4-5-2-3-4)	3.6
Միջազգային կազմակերպություն	(4-4-5-5-2)	4	(4-4-5-5-2)	4
Էկոնոմիկայի նախարարություն (գյուղատնտեսություն)	(2-3-3-4-3)	3	(5-5-5-4-5)	4.8
Արտակարգ իրավիճակների նախարարություն	(3-4-5-3-4)	3.8	(5-5-4-5-5)	4.8
Կրթություն	(3-4-4-5-3)	3.8	(5-5-4-5-4)	4.6

Առողջապահություն				
ՅՈՒՆԻՍԵՖ	(4-4-5-5-2)	4	(4-4-5-5-2)	4
Սեյվ դը Չիլդրեն	(3-4-5-3-4)	3.8	(5-5-4-5-5)	4.8

Նշված աղյուսակում տեղական ինքնակառավարման մարմիններին քննարկման ընթացքում մասնակիցները գնահատել են 4+5+2+3+4=18 (ընդհանուր գումար), որից հետո այն միջինացվում է, այսինքն՝ 18:5 (5-ը քննարկման մասնակիցների թիվն է)=3,6: Ինչպես երևում է աղյուսակից, մասնակիցները առավել կարևոր են համարել Էկոնոմիկայի և Արտակարգ իրավիճակների նախարարությունները և Սեյվ դը Չիլդրեն կազմակերպությունը, մինչդեռ ազդեցության/մասնակցության առումով՝ միջազգային կազմակերպություններն ու ՅՈՒՆԻՍԵՖ-ը: Այս գործընթացը կատարվում է յուրաքանչյուր կառույցի, կառավարման մարմնի կամ կազմակերպության համար առանձին-առանձին: Աղյուսակում կառույցները, կազմակերպությունները և կառավարման մարմինները բնակավայրից բնակավայր կարող են ենթարկվել փոփոխության (ավելացվել կամ պակասեցվել) կախված տեղում ունեցած իրենց ազդեցությունից և մասնակցությունից:

9. Զանգվածային հարցում բնակչության շրջանում հարցաթերթիկների միջոցով

Նպատակ

Համայնքի վերաբերյալ բազմաբնույթ տեղեկատվություն հավաքագրելու համար հարցաթերթիկի ***(հավելված 2)*** միջոցով բնակչության հարցումը գնահատման արդյունավետ տարբերակներից է: Հարցաշարը ներառում է համայնքին սպառնացող վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտմանը ուղղված հարցեր՝ կայացած կամ հնարավոր աղետների և կլիմայի փոփոխության ազդեցության համատեքստում:

Հարցաթերթիկում պետք ներգրավել հարցեր, որոնք թույլ կտան բնակչությունից պարզել համայնքում կլիմայի փոփոխության հետևանքով տեղ գտած փոփոխությունները: Եղանակի տեղական փոփոխությունների և դրանց ենթադրաբար հետևանքների մասին հարցերը պետք է այնպես ձևակերպվեն, որպեսզի «կլիմայի փոփոխություն» հասկացությունը օգտագործելու անհրաժեշտություն հնարավորինս չառաջանա, քանի որ իրազեկվածության պակասի պատճառով, այդ եզրույթը հաճախ շփոթություն է առաջացնում հարցվողների շրջանում: Միևնույն ժամանակ, հարցաթերթիկը պետք է հարցեր պարունակի կլիմայի փոփոխության վերաբերյալ մարդկանց իրազեկվածության մակարդակը կամ պետության կողմից այդ ուղղությամբ ձեռնարկված և անմիջապես մարդու կենսական շահերը շոշափող քայլերի իմացությունը պարզելու համար:

Այս գործիքի կիրառումը թույլ է տալիս բնակչությունից համայնքի վերաբերյալ բազմաբնույթ տեղեկատվություն ստանալու արդյունքում որոշակի եզրակացությունների հանգել համայնքին սպառնացող վտանգների, խոցելիության և դիմակայելու կարողությունների վերաբերյալ: Այնուհանդերձ,

այն, դասական իմաստով, բնակչության հարցախույզ չէ և չի ենթադրում ստացված պատասխանների ճշտությունն ապահովելու համար ընտրանքի հատուկ հաշվարկ կատարել[10] կամ հարցվողների Ֆիքսված քանակ /օրինակ՝ բնակչության 5%-ը/ սահմանել: Հաշվի առնելով հարցման առանձնահատկությունները, մասնավորապես՝ որ

- հարցումը անց է կացվում դեմ առ դեմ /ոչ հեռահար/,
- բնակիչներից ոչ բոլորն են համաձայնվում մասնակցել հարցմանը,
- մեկ մասնակցի հաշվով հարցումը բավականին ժամանակատար է /30-ից 40 րոպե, կախված հարցվողի անհատականությունից/,

նկատի ունենալով նաև հարցումն անցկացնելու հետ կապված որոշակի սահմանափակումները՝ մարդկային ռեսուրսների և ժամանակի սղությունը, օրինակ, առաջարկվում է, որպեսզի հարցումները կազմակերպվեն հետևյալ սկզբունքների համաձայն.

- մասնակիցների ընտրության պատահականություն,
- սեռատարիքային բալանսի ապահովում,

հարցումների մասնակիցների օպտիմալ քանակի սահմանում, ինչին կարելի է հասնել տեղում ստացված տեղեկատվությունը գնահատելու արդյունքում: Եթե հարցումների որոշակի քանակից հետո ձևավորվում են զգալի ընդհանրություններ, հարցումը կարելի է դադարեցնել:

Կլիմայի փոփոխության առումով, հարցաշարը ներառում է նաև համայնքի զգայունության և հարմարվողականության կարողությունների վերաբերյալ հարցեր: Հարցաթերթը կարող է ենթարկվել փոփոխության համայնքի առանձնահատկություններից ելնելով:

Ակնկալվող արդյունքներ

Հարցաթերթիկների միջոցով հարցումը հնարավորություն է տալիս հարցվողին արտահայտելու իր անմիջական և անկեղծ կարծիքն առօրյա խնդիրների վերաբերյալ: Արդյունքում հավաքագրվում են տեղեկություններ՝

- համայնքին սպառնացող վտանգների իմացության,
- համայնքի խոցելի տարրերի ու կարողությունների իմացության,
- աղետների ռիսկի նվազեցման ոլորտի հիմնական դերակատարների,
- արտակարգ իրավիճակներին դիմակայման և արձագանքման պատրաստվածության,
- աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների պլանավորման և իրականացման գործընթացներում բնակչության ներուժը ներդնելու պատրաստակամության,
- աղետների ռիսկի նվազեցման միջոցառումներին մասնակցության և շահագրգռվածության վերաբերյալ:

[10] Բնակչության հարցախույզ անցկացնելիս, 95% վստահելիության մակարդակ և 5% վստահելիության միջակայք ապահովելու համար, 20000 բնակիչ ունեցող բնակավայրի ընտրանքը կազմում է 377 հոգի, իսկ 500 բնակիչ ունեցող բնակավայրինը՝ 217 հոգի /https://www.surveysystem.com/sscalc.htm /: Հասկանալի է, որ տվյալ պարագայում նման քանակի հարցում անցկացնելը անհնարին է:

Զանգվածային հարցումից և թիրախային/ֆոկուս խմբերի հետ ունեցած հարցազրույցներից ստացված տեղեկատվությունը վերլուծվում և դասակարգվում է ըստ առաջնայնության՝ համայնքի վրա ունեցած ազդեցության և կարևորության տեսանկյունից: Օրինակ.

- համայնքին սպառնացող հիմնական վտանգավոր երևույթները (կարկտահարություն, սելավ, սողանք, ուժեղ քամիներ, վաղ գարնանային ցրտահարություններ, երաշտ և այլն) և այդ երևույթների դրսևորման մեջ տեղի ունեցած փոփոխությունները
- վտանգավոր երևույթների սեզոնայնությունը,
- վտանգավոր երևույթների հաճախականությունը և ուժգնությունը,
- համայնքում տեղի ունեցած արտակարգ իրավիճակներից բնակչության կողմից կրած վնասները,
- վտանգների և խոցելիության համադրությունը,
- աղետներին դիմակայելու վերաբերյալ համայնքի բնակչության գիտելիքները,
- բնակչության շրջանում արտակարգ իրավիճակներում գործելակերպի և առաջին օգնության վերաբերյալ ստացված տեղեկությունները և այլն:

2.1.3. Հավաքագրված տվյալների, տեղեկատվության վերլուծություն

Նպատակ

Հավաքագրված տվյալների, տեղեկատվության վերլուծության համար կիրառվում է համադրման մեթոդը, որը թույլ է տալիս իրականացնել «խաչաձև ստուգում», և բացահայտել տվյալների ճշգրտության աստիճանը: Կիրառման համար անհրաժեշտ է ունենալ առնվազն երեք հավասարազոր աղբյուրների տվյալներ:

Ակնկալվող արդյունքներ

Վերլուծությունը իրականացվում է նպատակ ունենալով բացահայտել համայնքին սպառնացող վտանգների առաջնահերթությունը և այդ վտանգների նկատմամբ համայնքի խոցելիությունը: Խմբերի կողմից հավաքագրված երեքական հավասարազոր տվյալների արդյունքները (օրինակ՝ ուղղակի դիտարկում, սխեմատիկ պատկերում, սեզոնային օրացույց) վերլուծվում են, որից հետո այդ բոլորը համադրվում են երկրորդային աղբյուրների հետ: Համադրման ժամանակ հակասությունների դեպքում վերլուծող խումբը նորից քննարկում է իր կողմից հավաքագրված տվյալները և ներկայացնում ՎԽԿԲ թիմին: Այնուհետև, այդ խմբերի կողմից ներկայացված երեքական հավասարազոր տվյալները համադրվում են միմյանց հետ: ՎԽԿԲ թիմն ընդհանուր պատկերացում է կազմում համայնքին սպառնացող վտանգների, ռիսկի վերաբերյալ և, եթե համադրման ժամանակ լինում են հակասություններ, ապա տվյալները նորից համեմատվում, վերլուծվում և ամփոփվում են: Խոցելիության և կարողությունների գնահատման թիմը

կատարում է որոշակի եզրակացություններ և ձեռնարկում համայնքի իմացության մակարդակի բարձրացման ուղղված համապատասխան քայլեր, այդ թվում՝ համայնքի թույլ և ուժեղ կողմերի, համայնքի հնարավորությունների և առկա կամ հնարավոր խոչընդոտների, աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված նպաստավոր նախագծերի վերաբերյալ:

Ստացված տվյալների հիման վրա ՎԽԿԲ թիմը կազմում է վերլուծական աղյուսակներ (ստորև), համայնքի քննարկմանն է ներկայացնում իր եզրակացությունները, առաջարկությունները, որոնք կապված են հետագա գործունեության պլանավորման և իրագործման հետ:

Օրինակ.



Կլիմային վերաբերող վերլուծությունը աղետների ռիսկի վերլուծության մաս է հանդիսանում և, ընդհամենը, նպաստում է ճանաչելու այն վտանգավոր երևույթները, որոնք առաջանում են կամ խորանում կլիմայի փոփոխության արդյունքում: Համադրելով հավաքագրված տվյալները, յուրաքանչյուր վտանգի համար ուսումնասիրվում է համայնքում առկա համակարգերի/ոլորտային տարրերի վտանգին ենթարկվածությունը, վտանգի նկատմամբ զգայունությունը և հարմարվողականության կարողությունները: Ուսումնասիրության արդյունքները ամփոփելու համար առաջարկվում է վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման գոյություն ունեցող վերլուծական ձևաչափերը հավելել երեք նոր ձևաչափով: Դրանցից մեկը նախատեսված է բացահայտելու կլիմայի փոփոխության նկատմամբ համայնքի խոցելիությունը, մյուսը՝ կլիմայական ռիսկերը և վերջինը՝ ներկայացնելու ռիսկերին դիմակայելու հարմարվողականության հնարավոր ռազմավարությունները (աղյուսակները ստորև): Վերլուծական աղյուսակների այս փաթեթը կազմվում է կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելի ճանաչված բոլոր ոլորտների համար:

2.1.4. Վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման վերլուծական աղյուսակներ

Օրինակ 1. Համայնքին սպառնացող առավել վտանգավոր երևույթների առաջնայնացման աղյուսակ:

	ԵՐԵՎՈՒՅԹ	***ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ***
1.	Երկրաշարժ	Համայնքը գտնվում է սեյսմավտանգ գոտում, ինչը սպառնում է մարդկանց կյանքին ու առողջությանը՝ գործելակերպի վերաբերյալ իրազեկվածության պակասի և բնակելի տների ու շինությունների ոչ սեյսմակայուն լինելու պատճառով:
2.	Սողանք	Սողանքի հետևանքով կարող է փակվել համայնքից մայրուղի տանող ճանապարհը: Սողանքի ակտիվացմանը նպաստում է սողանքավտանգ տարածքով անցնող վնասված ոռոգման համակարգը: Ջրագծի վնասման պատճառով համայնքի այգիները մնում են առանց ջրի, ինչը պատճառ է դառնում բերքի վնասմանը և նյութական կորուստների:

3.	Երաշտ	Կլիմայի փոփոխության պատճառով առկա է ջերմաստիճանի բարձրացում, տեղումների սակավություն: Ոռոգման ջրի պակասը (նաև բարձր գինը) լուրջ վնաս են հասցնում գյուղատնտեսությանը, այգեգործությանը:
3.	Ցրտահարություն	Վերջին տաս տարիների ընթացքում հիմնականում նկատվում է գարնանը: Խախտվել է բույսերի վեգետացիոն շրջանը: Վնաս է հասցվում գյուղատնտեսությանը և այգեգործությանը:
4.	Անտառային հրդեհներ	Մարդու սխալ գործունեության և կլիմայի փոփոխության պատճառով, որին գումարվում է վերջին տարիներին նկատվող չոր եղանակը:
5.	Կարկուտ	Վնասում են բերքը, շինությունները, տրանսպորտային միջոցները:

Աղյուսակի առաջին սյունյակում նշվում է համայնքին սպառնացող տվյալ վտանգն՝ ըստ գերակայության: Օրինակ՝ եթե համայնքի համար երկրաշարժն առաջնային վտանգ է ներկայացնում, ապա այն նշվում է «1» թվանշանով: Այնուհետև համարակալվում են մնացած վտանգներն ըստ գերակայության: Հնարավոր է նաև, որ համայնքը երկու սպառնացող վտանգները համարի հավասարազոր և համարակալի միևնույն թվով: Ինչպես երևում է օրինակում երկու տարբեր սպառնացող վտանգներ՝ երաշտը և ցրտահարությունը համայնքը համարել է հավասարազոր և նշել «3» թվանշանով:

Օրինակ 2. Համայնքի բնակիչների կողմից բացահայտված խնդիրները, դրանց պատճառներն ու հնարավոր լուծումներն՝ ըստ խոցելիության նվազեցման և կարողությունների հզորացման:

Ռիսկ		***Ազդեցություն***	***Հնարավոր լուծում***	***Ակնկալվող արդյունք***
Վտանգ	***Խոցելիություն***			
Սելավ	Դպրոց, մանկապարտեզ, բնակելի տներ, այգիներ, գյուղամիջյան ճանապարհներ, մարդիկ, ընտանի կենդանիներ	Գյուղի դիրքը նպաստում է նաև, որ տարբեր հատվածներում ձևավորված սելավահոսքերը միախառնվեն և	Սելավատարի կառուցում Սելավատարների մաքրում Ափերի ամրացում Լանջերի թփապատում	Հնարավոր կորուստների նվազեցում, սելավի հետևանքների վերացման համար համայնքի ռեսուրսների խնայում

		դառնան ավելի վտանգավոր Գյուղամիջյան ճանապարհները դառնում են անանցանելի: Սելավային հոսքերը լցվում են բնակելի տների նկուղներն ու տնամերձ տարածքները, վնասելով տների հիմքերը և տնամերձ հողամասերի ցանկատարածքները: Սելավային հոսքերը միախառնվելով հոսում են դեպի դպրոց ու մանկապարտեզ և գերեզմանոցի մոտով լցվում ձորը: Սպառնում է մարդկանց անվտանգությանը: Դիտվել է ընտանի կենդանիների կորուստ: Յուրաքանչյուր սելավից հետո անհրաժեշտություն է առաջանում տարածքները մաքրելու համար կիրառել մեխանիզացված տեխնիկա:		
Կարկուտ	Այգիներ, ցանկատարածքներ, բերք, ընտանի	Վնասվում կամ ամբողջովին ոչնչացվում են ցանկատարածքները,	Հակակարկտային կայանների, հակակարկտային ցանցերի	Բերքի պահպանում, տնտեսական վիճակի բարելավում

	կենդանիներ, շինություններ	բերքը, կոտրվում շինությունների ապակիներն ու տանիքաձածկերը, վնասվում տրանսպորտային միջոցները: Բերում է էական նյութական կորուստների:	տեղադրում, կանխատեսման և վաղ ազդարարման համակարգի մշակում և կիրառում	
Սողանք	Մարդիկ, բնակելի տներ, կառույցներ, ճանապարհներ, նյութական կորուստ	Համայնքի գրեթե ամբողջ տարածքը գնտվում է սողանքավտանգ գոտում: Սողանքի հետևանքով արդեն վնասվել են բնակելի տներ, կառույցներ: Սողանքի ակտիվացմանը նպաստում են գյուղի ողջ տարածքում առկա բնական ջրերի արտահոսքը: Անգամ ամռանը բնական ջրերը հոսում են գյուղի ճանապարհներով, մեծացնելով վթարային շինությունների փլուզման հավանականությունը:	Սողանքային հատվածների մասնագիտական զննում, քարտեզագրում, վթարային շենքերից բնակչության տարահանում, նոր տների կառուցման համար միջոցների հայթայթում, վտանգի մասին բնակչության վաղ իրազեկում	Նյութական և մարդկային կորուստներից խուսափում, տարահանված բնակիչներին նոր բնակարաններով ապահովում, բնակիչների իրազեկում սողանքային հատվածների ճշգրիտ նկարագրված պատկերի վերաբերյալ
Երաշտ	Ցանքատարածքներ, այգիներ, խոտհարքներ, անասնապահություն	Բերքատվության անկում, բերքի կորուստ, նյութական կորուստներ անասնապահության և հողագործության ոլորտներում	Կաթիլային ոռոգման համակարգի կիրառում, հուսալի կլիմայական տեղեկատվության ապահովում	Նոր տեխնոլոգիաների ներդրում, հնարավոր կորուստների նվազում

Օրինակ 3. Համայնքին սպառնացող վտանգներին ենթակա առավել խոցելի խմբերի խոցելիության բացահայտման աղյուսակ երկրաշարժի դեպքում:

Խոցելի խմբեր	***Խոցելիություն***	***Բացասական հետևանքներ***	***Համայնքի կարողություններ և ռիսկի նվազեցման գործողություններ***
Երեխաներ	Դպրոցների, մանկապարտեզների շենքերի ցածր սեյսմակայունություն	Վիրավորներ, շենքերի և շինությունների փլուզում, զոհեր	Շենքերի և շինությունների սեյսմիկ վիճակի բարելավում, արտակարգ իրավիճակների վարքականոնների ուսուցում
Կանայք	Բնակելի տների ցածր սեյսմակայունություն	Վիրավորներ, տների, շինությունների, կառույցների մասնակի կամ լրիվ փլուզում, մարդկային և նյութական կորուստներ	Սեյսմակայուն շինարարություն, արտակարգ իրավիճակներին դիմակայման ուղղությամբ բնակչության ուսուցում և իրազեկում
Հաշմանդամություն ունեցող անձիք	Բնակելի տների և շենքերի ցածր սեյսմակայունություն, շարժունակության սահմանափակում, տարահանման հատուկ պայմանների բացակայություն	Ճանապարհների արգելափակում, տների, շինությունների, կառույցների մասնակի կամ լրիվ փլուզում, վիրավորներ, մարդկային և նյութական կորուստներ, ծանր հոգեբանական տրավմաներ	Սեյսմակայուն շինարարություն, արտակարգ իրավիճակներին դիմակայման ուղղությամբ բնակչության ուսուցում և իրազեկում, հոգեբանական աջակցության տրամադրում
Տարեցներ	Շարժունակության սահմանափակում, քանի որ հիմնականում գտնվում են տանը	Վիրավորներ և զոհեր, բնակելի տների և շինությունների փլուզում, վիրավորներ, զոհեր	Շենքերի և շինությունների սեյսմիկ վիճակի բարելավում, համայնքի աղետներին պատրաստվածության և արձագանքման կարողությունների հզորացում, վարքականոնների ուսուցում
Այլ խոցելի խմբեր			

Համայնքին սպառնացող վտանգներին ենթակա առավել խոցելի խմբերի խոցելիության բացահայտման աղյուսակը կարող է լինել փոփոխական՝ կախված համայնքին սպառնացող վտանգների առկայությունից: Դա կարող է լինել սողանք, ուժեղ քամի, կարկտահարություն և այլն:

Կլիմայական ռիսկի բաղադրիչները դիտվում են որպես փոխադարձ կապվածությունը հաստատող հավասարումների փոփոխականներ: Այդ փոփոխականների վարքագծով կարելի է որոշել, թե բաղադրիչներից որը և որքանով է կախված կլիմայի փոփոխությունից: Բաղադրիչների վարքագիծը բնորոշվում է համապատասխան ցուցիչների արձագանքով կլիմայի փոփոխությանը: Բաղադրիչների համադրման և փոխազդեցության արդյունքը պատկերելու համար օգտագործվում են եռաչափ մատրիցայի վերլուծական հնարավորությունները, որտեղ յուրաքանչյուր բաղադրիչի հնարավոր փոփոխությունը չափվում է վարկանիշային արժեքի եռաստիճան համակարգով՝ ցածր, միջին և բարձր:

Վերլուծության արդյունքում, բացահայտվում է նաև, թե համակարգը որքանով է խոցելի կոնկրետ կլիմայական դրսևորման նկատմամբ, համակարգի զգայունության և հարմարվողականության կարողությունների տարբեր մակարդակների համար: Այդ նպատակով, բավարար է համապատասխան մատրիցայում տեղադրել զգայունության և հարմարվողականության կարողությունների վարկանիշները և պարզել, թե տվյալ պարագայում խոցելիության որ տիրույթում է գտնվում ուսումնասիրվող համակարգը: Նման մեխանիզմով է իրականացվում նաև կլիմայական ռիսկի գնահատումը: Խոցելիության և ռիսկերի բացահայտման աղյուսակային վերլուծությունն իրականացնելու համար առաջարկվում է օգտագործել ստորև բերված մատրիցաները (Պատկերներ 1,2): Ստորև բերված են նաև կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելիության, կլիմայական ռիսկերի և հարմարվողականության հնարավոր ռազմավարությունների վերլուծական աղյուսակնորի օրինակներ:

Պատկեր 1





Պատկեր 2



2.1.5. Կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելիության և կլիմայական ռիսկի բացահայտման վերլուծական աղյուսակներ

Օրինակ 4. ԿԼԻԿԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Զ – ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ
Հ – ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Խ - ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ

ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ
Բ – ԲԱՐՁՐ
Մ – ՄԻՋԻՆ
Ց – ՑԱԾՐ



ԽՈՑԵԼԻ ՈԼՈՐՏ՝ <u>ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ</u>

ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ
■ – բարձր, ■ – միջին, ■ – ցածր
■ → ■ – միջին-բարձր, ■ → ■ – միջին-ցածր

ԱՌԱՎԵԼ ԽՈՑԵԼԻ ԽԱՎԵՐ՝
Մանկահասակներ, երեխաներ, պատանիներ, կանայք և աղջիկներ, հղի կանայք, կերակրող մայրեր, տարեցներ, հաշմանդամներ, փախստականներ և տեղահանվածներ, բոլորը

ՎՏԱՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ	ԽՈՑԵԼԻ ՏԱՐՐԵՐԻ/ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉ	ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ	ԱԼԱՎԵՐԴԻ		
			Զ	Հ	Խ
ՍԱՍՏԻԿ ՇՈԳ	Բնակչություն, հատկապես բնակչության խոցելի խավեր /առողջական վիճակի վատթարացում՝ թունավորումների, արևահարությունների, աղիքային/վարակիչ և սրտանոթային հիվանդությունների և սեզոնային ալերգիաների աճ/:	Երկարատև շոգ օրերի վերաբերյալ կանխատեսումների հասանելիություն Վաղ ազդարարման համակարգ Առողջապահական համակարգի ադեկվատ գործելու պատրաստվածություն, ներառյալ առողջության իրավիճակի վերահսկումը Բնակչության իմացություն և իրազեկվածություն Համաճարակաբանական ծառայության հասանելիություն Սննդի անվտանգության ապահովում	Բ	Մ	■ ↑ ■
	Քրոնիկ հիվանդներ /քրոնիկ հիվանդությունների սրացման միտում և կյանքին սպառնացող դեպքերի աճ/:	Շտապօգնության ծառայության հասանելիություն, համապատասխան տեխնիկական և մասնագիտական կարողությունների առկայություն	Մ	Մ	

ԵՐԱՇՏ	Հղի կանայք, կերակրող մայրեր, մանկահասակներ, երեխաներ /սնուցման իրավիճակի վատթարացում/	Երաշտի վերաբերյալ կանխատեսումների հասանելիություն Վաղ ազդարարման համակարգ Ապրուստի միջոցներ Գյուղատնտեսության ապահովագրություն Սննդի և պարենային անվտանգություն Փոխհատուցման և վարկային աղբյուրների հասանելիություն Տեղական, մարզային և ազգային ֆինանսա-բյուջետային մեխանիզմներ Ֆինանսավորման դոնորական/արտաքին աղբյուրներ	Բ	Ց	

Խոցելիության վերլուծական աղյուսակը, իրականում, լրացվում է Excel ֆորմատում, ինչը հնարավորություն է տալիս ամեն բնակավայրի համար ստեղծել անհատական մատյան, որտեղ առանձին էջերով ներկայացված են բոլոր ոլորտները: Այդ ձևաչափը թույլ է տալիս սյունյակներում օգտվել բացվող մենյուի հնարավորությունից, ինչը հեշտացնում է տվյալների ներմուծումը: Այն ունի հետևյալ տեսքը (Պատկեր 3).

Պատկեր 3. Թումանյան խոշորացված համայնքի Շամուտ բնակավայրի խոցելիության վերլուծական Excel ձևաչափը:



Վերլուծական հաջորդ աղյուսակը վերաբերվում է կլիմայական ռիսկի ուսումնասիրմանն ու գերակա ռիսկերի բացահայտմանը, որ իրականացվում է կլիմայական վտանգի առաջանալու հավանականության և խոցելիության ցուցանիշի համադրման միջոցով (օրինակ 5) և ***Պատկեր 2***-ում բերված կլիմայական ռիսկի վերլուծության մատրիցայի օգնությամբ:

Օրինակ 5. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Հ – ՎՏԱՆԳԻ ՍԱՍՏԿՑՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ԽՈՑԵԼԻ ՈԼՈՐՏ՝ <u>ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ</u>

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿ

■ – բարձր, ■ – միջին, ■ – ցածր

■ → ■ – միջին-բարձր, ■ → ■ – միջին-ցածր

Խ – ԽՈՑԵԼՈՒՈՒԹՅՈՒՆ
Ռ - ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿ

ՎՏԱՆԳ	Հ	ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ			***ԱԼԱՎԵՐԴԻ***	
					Խ	Ռ
ՍԱՍՏԻԿ ՇՈԳ		Բնակչություն, հատկապես բնակչության խոցելի խավեր	Առողջական վիճակի վատթարացում	Թունավորումների, արևահարությունների, ինֆեկցիոն և սրտանոթային հիվանդությունների և սեզոնային ալերգիաների աճ	■ ↑ ■	■ ↑ ■
		Քրոնիկ հիվանդներ		Քրոնիկ հիվանդությունների սրացման միտում և կյանքին սպառնացող դեպքերի աճ		
ԵՐԱՇՏ		Հղի կանայք, կերակրող մայրեր, մանկահասակներ, երեխաներ		Սնուցման իրավիճակի վատթարացում		

Ինչպես երևում է ռիսկերի բացահայտման աղյուսակից, կլիմայի փոփոխության հետևանքով ջերմաստիճանի սաստիկ բարձրացումը և վերջին տարիներին հաճախակի ի հայտ եկող երկարատև շոգը լուրջ առողջական խնդիրների պատճառ է դառնում և դիտարկված ռիսկերից ամենաառաջնայինն է: Երկրորդը՝ երաշտն է, որ բերքի և եկամուտների անկման արդյունքում բերում է թերսնման: Հորդառատ անձրևները, թեպետ սրում են ջրի աղտոտվածության հարցը, իրականում դրա բուն պատճառը չեն: Հիմնական խնդիրը կապված է խմելու ջրի համակարգի անբավարարության հետ, սկսած ջրակուտակման ավազանների վնասվածությունից, պահպանության ռեժիմի խախտումից և մաքրման համակարգի բացակայությունից, և վերջացրած ցանցը սնող խողովակների և ներքին բախշման ցանցի վթարային վիճակից, ապօրինի միացումներից, ջրի կառավարման հետ կապված բազմաթիվ այլ բացերից:

Օրինակ 5. ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՈՑԵԼԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ

ՎՏԱՆԳ	***ԽՈՑԵԼԻ ՈՎԼՈՐՏ***	***ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
ԵՐԱՇՏ	Ն Յ Հ Ժ	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՍԱՍՏԻԿ ՇՈԳ ԿԱՐԿՈՒՏ		1. Հետևողականորեն աշխատանքներ իրականացնել բնակչության շրջանում կլիմայի փոփոխության և ***առողջության*** վրա վերջինիս բացասական ազդեցության, համապատասխան վարքագծի և սանիտարա-հիգիենիկ նորմերի պահպանման վերաբերյալ իմացության և իրազեկվածության բարձրացման նպատակով 2. Այս նպատակով օգտագործել համայնքում հասանելի հաղորդակցության բոլոր միջոցները, ներառյալ կրթական հաստատությունների և քաղհասարակության ինստիտուտների ընձեռած հնարավորությունները 3. Աշխատանքներին լայնորեն ներգրավել հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածի ներուժը, նպաստելով համապատասխան հանրային ձեռնարկումներին
		ՀԱՍՏԱՏՈՒԹԵՆԱԿԱՆ / ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
		4. Մշակել և ներդնել մեխանիզմներ բնակչության շրջանում հիդրոօդերևութաբանական կանխատեսումների ծառայությունների հասանելիությունը ապահովելու նպատակով 5. Մշակել և ներդնել առողջապահական վաղ ազդարարման համակարգ, ներառյալ վերջինիս կառավարման և հաղորդակցության ընթացակարգերը 6. Մշակել առողջապահության առաջնային օղակների կլիմայի փոփոխությամբ պայմանավորված առողջական կանխարգելիչ և արձագանքման միջոցառումների տարեկան պլաններ 7. Միջոցներ ձեռնարկել սանիտարա-համաճարակային ծառայության կարողությունների և հասանելիության բարձրացման ուղղությամբ 8. Բնակչությանն իրազեկել համայնքի և դպրոցների ԱՌԿ պլանների վերաբերյալ և խթանել յուրաքանչյուրի մասնակցությունը այդ պլանների իրագործման հարցում՝ մասնավորապես կամավորների և երիտասարդների ներգրավմամբ 9. Մշակել հանրային առողջության պլանային մոնիթորինգի մեխանիզմ, հատկապես սեզոնային հիվանդությունների և համաճարակների բռնկումները կանխարգելելու նպատակով 10. Մշակել սցենարներ և նախատեսել այդ սցենարներն իրագործելու մեխանիզմներ երեխաների, հղի կանանց, կերակրող մայրերի, մանկահասակների թերսնումը կանխելու և սնուցում ապահովող սննդակարգին համապատասխան սննդամթերք ապահովելու նպատակով, եթե դրա կարիքն առաջանա 11. Նախաձեռնել քայլեր շտապօգնության ծառայության կարողությունների հզորացման համար, հաշվի առնելով ծառայության ծածկույթի մեծությունը /31 բնակավայր/ և ծառայության ներկայիս խնդիրների ծավալը
		ՖԻՆԱՆՍԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
		12. Պայմաններ ապահովել գյուղատնտեսության արտադրանքի կլիմայական ռիսկերից ապահովագրումը խթանելու ուղղությամբ, ներառյալ պոտենցիալ շահառուների իրազեկվածության բարձրացման և խորհրդատվական ծառայությունների հասանելիության ուղղությամբ 13. Մշակել ***Ալավերդուն*** բնորոշ /հաշվի առնելով պղնձաձուլարանի փակումից հետո առաջացած գործազրկության բարձր մակարդակը/ փոքր և միջին բիզնես մոդելներ, տնային տնտեսություններին, բացի տնամերձերից ստացվող համեստ եկամուտից, զբաղվածության այլ հնարավորություններ ստեղծելու նպատակով /տուրիզմի բնագավառում, օրինակ/ 14. Ապահովել կլիմայական ռիսկերին դիմակայելու նախաձեռնությունների ֆինանսավորման մեխանիզմների հասանելիություն/ներդնում, ներառյալ ռիսկերի նվազեցմանն ու հարմարվողականությանն ուղղված ձեռնարկումների ֆինանսական ապահովումը, ինչպես նաև փոխհատուցման և վարկային աղբյուրների հասանելիությունը
ԿԱՐԿՈՒՏ		ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ/ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ
		15. Խթանել հակակարկտային ցանցերի կիրառումը տեխնոլոգիապես կիրառելի տարածքներում

Հետագա քայլերը իրականացվում են համաձայն ՏՄՌԿ ուղեցույցի առանց որևէ փոփոխության: Ռիսկերի կառավարման հաջորդ փուլը, որը, տվյալ պարագայում, վերաբերվում է հարմարվողականության ռազմավարությունների վերածմանը գործողությունների պլանների, նույնպես որոշ առանձնահատկություններով կտարբերվի ռիսկերի նվազեցման գործողությունների պլանավորման գործընթացից: Հիմնական տարբերությունը նրանումն է, որ հարմարվողականության գործողությունները ավելի ժամանակատար են և բազմատարր: Հարմարվողականությունը ենթադրում է փոփոխություններ, և ոչ միայն ֆորմալ առումով, այլ նաև մտածողության, վարվելակերպի, հանրավոր է նույնիսկ, աշխարհայացքի: Որպես օրենք, նման փոփոխությունները ներգրավում են ողջ համայնքը՝ անհատներից ու գործարարներից մինչև ղեկավարություն: Մյուս կողմից, այս գործողությունները պահանջում են լուրջ ֆինանսական ներդրումներ, ինչը վեր է համայնքի ներքին կարողություններից: Դա նշանակում է, որ հարմարվողականության պլանավորման փուլում առանձին տեղ պետք հատկացվի ֆինանսա-բյուջետային բլոկին, որպեսզի համապատասխան ֆինանսական պլաններով և կանխատեսումներով ապահովվի հարմարվողականության ողջ գործընթացի ֆինանսական ապահովումը: Հարմարվողականության պլանների զարգացման պլաններում ինտեգրելը, նույնպես դյուրին չէ, որովհետև դրանք կարող են բավականին ծավալուն լինել և առնչվեն կառավարման մի քանի ոլորտի հետ, այսպիսով ինքնին վերածվելով զարգացման պլանի:

Միևնույն ժամանակ, ՏՄՌԿ մեթոդաբանությունը բավականին ճկուն է և տեղական մակարդակում հարմարվողականության պլանավորման հարցը կարող է լուծվել ՏՄՌԿ մեթոդաբանության շրջանակներում:

2.2. Նկատառումներ ՏՄՌԿ մեթոդաբանության կիրառելիության վերաբերյալ

Մեթոդաբանության երկար տարիների կիրառման փորձը թույլ է տալիս որոշ եզրահանգումներ կատարել՝ տեղերում այս մեթոդաբանությունը ներդնելու վերաբերյալ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է մեթոդաբանության կիրառման ողջ գործընթացին, դրանից բխող վերջնարդյունքին և նրան, թե ինչ պետք է արվի, որ աղետների ռիսկի տեղական կառավարումը լինի իսկապես պահանջված և արդյունավետ:

Այդ տեսանկյունից, մի շարք նկատառումներ, որոնք հետագայում կարող են դառնալ քննարկման առարկա, ներկայացված են հակիրճ ստորև աղյուսակում.

ՏՄՌԿ մեթոդաբանության կիրառման փորձը՝ խոչընդոտող և նպաստող գործոններ

Կիրառման հետ կապված էական ասպեկտներ	Խոչընդոտող գործոններ	Նպաստող գործոններ
Իրավական և հաստատութենական շրջանակ	• Չի կրում պլանավորված, սիստեմատիկ բնույթ • Ռիսկերի գնահատումը որպես անհրաժեշտ և պարտադիր գործառույթ պետական կառույցների կողմից լիարժեք չի ընկալվում • Համագործակցությունը այլ հաստատությունների հետ թույլ է • ԱԻՆ-ը գործնականորեն ներգրավված չէ կլիմայի հարմարվողականության ազգային ծրագրում • Գործընթացը ինստիտուցիոնալիզացված չի • ՀՀ բյուջեի կառուցվածքում ԱՌԿ ֆինանսավորում նախատեսված	• Հաստատված է ԱԻ նախարարի հրամանով • ԱԻՆ և ՏԿԵՆ նախարարների համատեղ հրամանով դրվել է կիրառման մեջ • Օրենսդրական դաշտը բարենպաստ է • ԱԻՆ-ում ստեղծվել է ԱՌՆ վարչություն • ՃԿՊԱ-ն ներգրավված է բոլոր ձեռնարկումներում և ունի հարուստ գիտելիքային բազա • Լայնորեն կիրառվում է ԱՌՆԱՊ հիմնադրամի և ԱՌՆԱՊ-ի գործընկեր կազմակերպությունների /Հայկական կարմիր խաչ, «ՕքսԵՋԵն», Փրկիր երեխաներին, «ԼՈՌԷ» փրկարար ջոկատ և այլն/ կողմից:
ՏԻՄ շահագրգռվածություն և ընկալելիություն	• Քանի որ համայնքային պլաններում ՏՄՌԿ արդյունքները հազվադեպ են արտացոլվում, պետք է ենթադրել որ ընկալման պակաս կա • Շահագրգռվածությունը անմիջապես կապված է	• Գործընթացը դրական է ընդունվում համայնքների ղեկավարության կողմից • Աշխատանքների անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերվում է

	ֆինանսական հնարավորությունների հետ	
Համայնքի մասնակցություն	• Զգացվում է գիտելիքի/ընդհանուր իմացության լուրջ պակաս • Կայուն չէ, չունի շարունակականություն • Մարդկային ռեսուրսի պակաս • Անվստահության էլեմենտները առկա են, քանի որ շատ նման, համայնքահեն ձեռնարկումներ այդպես էլ մնում են պիլոտային փուլում	• Մասնակցությունը բուն գործընթացին ապահովվում է • Շահագրգիռ քննարկումներ կայանում են
ԽԿԲ և պլանավորման գործիքակազմի կիրառելիություն և մատչելիություն	• Փորձը ցույց է տալիս, որ վերլուծության փուլը հիմնականում իրականցվում է գործընթացը առաջնորդող թիմի կողմից՝ ինտերնետային և մեծ ծավալի տվյալների հետ աշխատանքը բարդություններ է առաջացնում համայնքային թիմի համար • Տեղական մակարդակում շատ էական տվյալներ բացակայում են • Կլիմայի կամ կլիմայական վտանգներից հասցված վնասի վերաբերյալ տեղերում տվյալներ ընդհանրապես չկան	• Գործիքակազմը բավական դյուրին է համայնքում կիրառելու առումով, հատկապես տվյալների հավաքագրման փուլում • Լավ է ընկալվում նաև պլանավորման փուլը, երբ խոսվում է կոնկրետ լուծումներից
ԱՌԿ պլաններ	• Հաճախ մնում են ուղղակի թղթի վրա • Համայնքը, մեծ առումով, շատ հաճախ անգամ տեղյակ չէ այդ պլանների առկայության մասին	• Բուն ԱՌԿ պլանը մեծ պոտենցիալ է պարունակում թե անվտանգությունը և թե տնտեսության զարգացման կայունությունը ապահովելու առումով
ԱՌԿ-զարգացման պլանների փոխազդեցություն և ինտեգրում	• Մոտեցումը գործնականում չի կիրառվում • Ֆորմալ առումով այն պահանջված չէ	• Բոլոր նախադրյալները ստեղծված են ԱՌԿ, հետագայում նաև հարմարվողականության լուծումները ոլորտային զարգացման պլաններում ներառելու համար
Ֆինանսների հավաքագրում և հասանելիություն	• Համայնքային բյուջեում ԱՌԿ որևէ գործունեության համար ֆինանսներ նախատեսված չեն • Արտաբյուջետային հնարավորությունները սահմանափակ են • Առկայության դեպքում առաջնահերթությունը տրվում	• Մարքեթինգի լայն հնարավորություն է ընձեռում • ՏՄՌԿ ուսումնասիրության արդյունքների շուրջ կարող են ստեղծվել համայնքային ֆոնդեր, համագործակցության պլատֆորմներ, հանրային-

	է սոցիալական խնդիրների լուծմանը	մասնավոր համագործակցության մեխանիզմներ
Արդյունավետություն	• Ուսումնասիրության արդյունքները նպատակին ծառայեցնելու և առաջարկված լուծումները կյանքի կոչելու տեսակետից՝ արդյունավետ չէ, քանի որ չի նախատեսում լուծումներն իրականացնելու ֆինանսա-տնտեսական մեխանիզմներ	• Բուն ուսումնասիրության արդյունքների տեսանկյունից՝ արդյունավետ է, քանի որ թույլ է տալիս վեր հանել համայնքի գրեթե բոլոր «ցավերը», առաջարկելով նաև լուծումներ
Քաղաքային և գյուղական համայնքներ	• Խիտ բնակեցված, ենթակառուցվածքներով հարուստ, ոլորտային կառավարման տարրեր ունեցող մեծ քաղաքների համար կիրառելի չէ	• Լիարժեքորեն կիրառելի է գյուղական և քաղաքատիպ համայնքներում, նաև փոքր քաղաքներում
Կլիմայական գործոնի ներառվածություն	• Կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրների ողջ սպեկտրը, ներառյալ կլիմայի նկատմամբ խոցելիությունը, հարմարվողականության կարողությունները և ռիսկը ՏՄՌԿ նախկին տարբերակում լիարժեք չէր դիտարկվում	• ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ԱՌՆԱՊ հիմնադրամի կողմից իրականացված ծրագրի սահմաններում այդ բացը լրացվել է, կլիմային վերաբերվող հարցերը արծարծված են և կլիմայական վտանգները և դրանցից բխող ռիսկերի բացահայտման մեխանիզմը ներառված է ՏՄՌԿ գործիքակազմում.